398.5
Y-20.

17 MAY 2013
0120-10
398.5
Ч-20
1002
7735

ՍՏԵՓԱՆ ԿԱՆԱՅԵԱՆՑ

ՉՈՉԱՆՑ ՏԱՆ

ՍԱՄՄԱՑ ԾՈՒԵՐ

ԴԱՒԻԹ ԵՒՄՀԷՐ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԷՊԻ

ՊԱՏՄԱԿԱՆԸ

Արտատպուած «Արարատ» ամսագրից

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
Էլիֆարաւարժ Տպարան սրբոյ Էջմիածնի
1907

56777

ՃԻՒՂԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵՒ

ԱՌԻՒԾԱՁԵՒ ՄՀԷՐ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Արարատի 1906 ամի Ապրիլի համարում (էջ 328—342) «Մամիկոնեանց Պատմութիւն» վերնագրով մեր գրուածքում այն միտքը յայտնեցինք, որ Մամիկոնեանք ոչ միայն հնուվը, այլև յետոյ մեր Սասմայ ծռերը, ԴԱՒԻԹ ԵՒ ՄՀԷՐ Ազգային–ժողովրդական վէպի նիւթ են դարձել։ Ապա միևնոյն վերնագրով «Յաւելուածի» տակ Արարատի նոյն տարուան Յունիս–Յուլիս (էջ 597—605), Օգոստոս–Նոյեմբեր (էջ 712—732) և Դեկտեմբեր (էջ 861—879) համարներում հետզհետէ ստիպուեցանք մեր առածը պնդել և ցոյց տալ, թէ ոչ միայն Մամիկոնեանք, այլև Արծրունիք և Բագրատունիք և ուրիշները՝ մերայիններ և օտարներ նոյնպէս դարձել են առարկայ մեր վէպի։ Եւ վերջերս մեր բարեկամների և ծանօթների մտերմական առարկութիւններն ու հակաճառութիւնները բանն այնտեղ հասցրին, որ մենք ստիպուեցանք աւելի ևս խորասուզուել նիւթի մէջ և նկատեցինք շատ աւելի պատմական, այլև դիցաբանական և կենցաղական նիւթեր ևս։ Այս վերնագրի տակ ահա ուզում եմ հետզհետէ հրատարակել ուսումնասիրութեանս արդիւնքը։—

Յաճախակի կրկնութիւններից և երկար վկայութիւններից խուսափելու համար, հրատարակում եմ նախ վէպի 1874—1906 թուականի տասներեք հրատարակութեանց հայ դիւցազների ճիւղագրութիւնը, որ վաղուց ձեռքի տակ պատրաստ ունէինք։ Այսպէս ընթերցողը մի համատես ակնարկով կը նկատէ այն, ինչ որ յաճախակի կրկնութեամբ ձանձրոյթ է պատճառում. իսկ որ գլխաւորն է ուղղակի և կողմնակի ապացոյցները երկար ծանօթութիւններով մթացնում են նիւթը ըստ երևոյթին երբեմն երկրորդական խնդրով, որ սակայն անհրաժեշտ է լինում աւելի պարզ և հիմնաւոր դաղափար տալու համար։

№ 1, ՍՊ, Մշբ.

Սասունցի Դաւիթ կամ Մհերի Դուռ: Դ. Սրուանձտեանի Դրոց-Բրոցից Կ. Պոլիս 1874, Մշոյ բարբառ խառն Բաղիշու: Արտատպել է Բ. Պատկանեանը՝ *Матеріалы* для изученія *Армянскихъ Нарѣчій*, Выпускъ II, Мушскій Діалектъ. К. П. Патканов, Санктъ Петербургъ, 1875, էջ 1—27:

Բաղդասար խալիֆայ կռապաշտ 1 ~ Հայ տարոնցի աղջիկ 1

Աբամելիք՝ Կապուտկողի թագաւորի չբուղջի 1 ~ ա. Մբսրայ թագաւորի կինը 1

Սանասար՝ Կապուտկողի թագաւորի զայվաջի 1. ~ ը. Կապուտկողի թագաւորի աղջիկ 1

Մսրամելիք 1

Ցռան Վէգի 2, Զէնով Ովան 2, Ճնճղափոքրիկ 2, Խոր Գուսան 2, Դաւիթ 2 ~ Խանդուդ խանում Գաղզուանու Ամիրի աղջիկ 3

Մհեր 4

(Քեռի Թորոսը Կապուտկողի թագաւորի որդին պիտի լինի, բայց գնում է Սասուն, «կարգւում» և այնտեղ մնում) 1.

1, Ա. էջ 1—5:—2, Գ. էջ 7—9:—3, Զ. էջ 17:—4, Ը. էջ 23:—

№ 2, ՄԱ, Մկբ.

ԴԱՒԻԹ ԵՒ ՄՀԵՐ ժողովրդական դիցազնական վէպ. Մ. Աբեղեան Շուշի, 1889. էջ Գ—Ժ+11—61: Մոկաց բարբառ:

X1

Դաւթի հայրը 1 ~ Դաւթի մայրը 1

Զէնով Ցովան 1 ~ Մսրամելիք 1

Վերգս 1 ~ X

Դաւիթ 1, Թլօր—2 (Թռլան Դաւիթ 3) ~ Խանդուլթ Խաթուն 5

Պարոն Աստղիկ 4

Մհեր 6 ~ Գոհար Խաթուն 7

(Ողորմիսի մէջ (Դաւիթ, Ա. էջ 11) յիշւում են Աբամելիք, Սանասար, Բաղդասար և Մելքսէթ քհանէն, բայց պատմուածքի մէջ ոչինչ չկայ նոցա մասին):

1, Ա. Դաւիթ, Ա. էջ 11:—2, Դաւիթ, Ա. էջ 13:—3, «Թռլան Դաւիթ» ճիւղի հատուածը (Ա. 11 և էջ 60—61) հմմ. Գարեգին Սարկաւագի Սասմայ Ծռեր, Աբարանի բարբառով, Դ. Դաւիթ էջ 32—33 ընդարձակ ծանօթութեան հետ:—4, Դաւիթ, ԺԴ. էջ 42, 44:—5, Դաւիթ, ԺԲ. էջ 37:—6, Մհեր, Ա. էջ 48:—7, Մհեր, Ե. էջ 55, 57:

№ 3, ԳՍ. Աբբ.

ՍԱՍՈՒՆՑԻ ԾՈՌԵՐ *Սասունցի Դաւիթ ժողովրդական վէպի երկու նոր վարիանտներ։ Գարեգին Սարկաւագ, Թիֆլիս 1892։ էջ, Ա—Ժ+1—60 Աբարանի բարբառով։*

Ա.

Սենեքերիմ թագաւոր կռապաշտ 1

Սանասար աստուածապաշտ 1 ~ Խլաթայ քաղաքացի 2 — Ասլամելիք աստուածապաշտ 1 ~ X

ա. Թեւաթորոսի աղջիկ 3 ~ Առուծաձև Մհեր 3 ~ բ. Այրի կին Մըսրում 3։ ըստ Ա-ի Առուծաձև Մհեր, 3

Մսրամելիք 3

Ցռան–Վէգոյ 3 — Փոքրիկ–Ճնճղիկ 3 — Դաւիթ ~ Խանդուիթ խանում, խաթուն
Ճնճղիկ–Փոքրիկ ըստ Ա-ի։ — Կապուտակոդի թագաւորի աղջիկ 4

Պղտիկ Մհեր 5 ~ Գոհար խանում
Պաճիկ թագաւորի աղջիկ 5ա։

1, Ա. Սանասար և Ասլամելիք, էջ 13։—2, Ա. էջ 19, 16։—3, Առուծաձև Մհեր, էջ 20—24։ 4, Գ. Դաւիթ, էջ 40—45։—5, Դ. Պղտիկ Մհեր, էջ 49, 59—60։—5ա, էջ 54—55, 59։—

Բ.

Թեւաթորոս 3

Աղջիկ 3 ~ Առուծաձև Մհեր 3 — Զինով–Ցովան (ըստ Ա. փոփոխակի Մհերի Գ. որդին. ըստ Բ-ի Խլաթայ տէր և Դաւիթի քեռի) 6։

Քեռի Թորոսիկ՝ Խանդուիթի եղբայր 7

Խոր Մանուկ 7 ~ Փիրմուսի աղջիկ Դեղձոն Աստղիկ Երզնկացու նշանածը 8 — Զինով–Ցովան 7

(Ցիշւում են նաև Մուշեղ Մշոյ թագաւոր, Ա. էջ 15. Մելքոն Խլաթայ՝ և Մխիթար թագաւոր։ Օհան Աղբակեցի Գ. էջ 33)։

3, Առուծաձև Մհեր, էջ 20—25։—6, Բ. Առուծաձև Մհեր, էջ 23, ծանօթ. 2։—7, Գ. Դաւիթ, էջ 2։—Դ. Պղտիկ Մհեր, էջ 53, ծանօթ. 2։—8, Գ. Դաւիթ, էջ 54—56։

№ 4, ԳՍ. Մկբ.

ՍԱՍՄԱՑ ԾՌԵՐ *Սասունցի Դաւիթ ժողովրդական վէպի երկու նոր վարիանտներ. Գարեգին Սարկաւագ, Թիֆլիս* 1892, *էջ ժ—Ա+61—151, Մոկաց բարբառով։*

Կռապաշտ թագաւոր 1 ═ *Խաչապաշտ թագաւորի աղջիկ, որ երկու բուռ ծովի ջրով յղանում է* 1

Սանասար մեծ աղբէր 1 ═ *Թագաւորի աղջիկ* 2 — *Բաղդասար պստի աղբէր* 1 ═ *Պղնձէ քաղաքի թագաւորի աղջիկ* 2

ա. Հայ կին ═ *Մհեր* 3 ═ *ը. Իսմիլ խանում (═ Մսրամելիքի խէր)* 3 — *Զէնով Ցովան* 4 — *Ցռան Վերգիոյ* 5

*Մսրամելիք*3

Դաւիթ՝ պապակի անունով 6, *Թլոր—6ա. Ծուռ—6բ. Թռլան—6գ.*
═ *Խանդուիթ Խաթուն Իրանցի (ըստ Բ-ի՝ Խոյայ քաղաքից)* 7

Մհէր 8 ═ *Հաղբրբեջանայ թագաւորի աղջիկ* 8

(*Ցիշւում են և Մըլքսէթ քահանայ* (*Գ. էջ* 80), *էն վարդապետ* (*Բ. էջ* 68), *իսկ Քեռի Թորոսի անունը չկայ, ոչ պատմուածքի ոչ էլ ողբմիսի մէջ*)։

1, *Ա. Սանասար և Բաղդասարի ծնունդը, էջ* 61—63։—2, *Բ. Բաղդասար, էջ* 69—79։ 3, *Գ. Դաւիթ, էջ* 80—81։—4, *Գ. էջ* 89, 95—97։—5, *Գ. էջ* 117։—6, *Գ. էջ* 83։—6*ա*, *Գ. էջ* 87։—6*բ*, *Գ. էջ* 89։—6*գ*, *Գ. էջ* 107—108։—7, *Գ. էջ* 121։—8, *Գ. էջ* 131—134։

№ 5, ԽԱ, Վխբ.

Տղայ Դաւթի և Աղջիկ Խանդուիթի հէքիաթը. Արարատ 1895 *ամի. թիւ ԺԱ. էջ* 431—438. *թիւ ԺԲ. էջ* 484—487. *Խ.(աչիկ) Վ.(արդապետ)։ Տաճկահայոց բարբառների խառնուրդ, սակայն տիրողը Վանայ բարբառն է։*

ա. Ճոչ կնիկ 2 ═ *Մսրայ Մհէր թագաւոր* 1 ═ *ը. Պստիկ կնիկ* 1

Դաւիթ 4—*Տղայ* 4*ա*, *Տղայ*—4*բ*։ — *Շուն Մելիք* 3 *կամ Մսրայ Մելիք* 3*ա*։
═ *Խանդուիթ խանում, խաթուն Փիլիսեցի* 5։

(*Դաւթի քեռու մասին խօսք լինում է, բայց անունը չէ յիշուած* 5։—*Ծէնով-Ցովան, Թեսթորոս և Ցռան Վէրկէն եղբայրներ են և Դաւթի քեռիքը* 6)։

1, *Ա. էջ* 431[1]։—2, *Դ. էջ* 431[2]։—3, *Բ. էջ* 431[2]։—3*ա*, *Թ. էջ* 435[2]։—4, *Դ. էջ* 431[2]։—4*ա*, *ԺԳ. էջ* 485[2]։—4*բ*, *ԺԴ. էջ* 487[1]։—5, *ԺԲ. ԺԳ. էջ* 484—485։—6, *Ը. էջ* 435[1]։

№ 6, ՀԱ, Խբ.

Սասունայ Դաւիթ, Խլաթայ բարբառով, Արարատ 1898, թիւ ԺԱ—ԺԲ. էջ 520[1]—525[2] անստորագիր, սակայն յայտնի է որ Սարգիս Հայկունունն է։

Հնդայ Մելիք՝ կռապաշտ 1 ∼ Զէնով Օվանի և Զէնով Սարգսի քոյրը 1

Ապտալ–Քերիմ 1 — Սինամ–Քերիմ 1 ∼ Սասունցի 1

Վեղոյ 2 Ցռոտ – 2 Ցռան—4 — Դաւիթ 2 ∼ Կապուտկողցի Խանդութ խանում 3

Դաւիթ 5.

(Քեռի Թորոսի անունը չէ յիշուում)։

1, էջ 520[1]։—2, էջ 522[1]։—3, էջ 524[2]։—4, էջ 525[1]։—5, էջ 525[2]։

№ 7, ԲԽ, Մկբ.

ՍԱՄՍԱՑ ՓԱՀԼԻՒԱՆՆԵՐ կամ ԹԸԼՕՐ–ԴԱՒԻԹ ԵՒ ՄՀԵՐ. Հայ–ժողովրդական դիւցազնական վէպի նոր վարիանտ, ժոկաց բարբառով. Բ. Խալաթեանց Վաղարշապատ 1889։ Էջ Ա—Է+1—74։

X

Մհերի հայրը 6 — Զէնով Ցեռվան 6 — Ցռան Վերգեռ 6 ∼ Սառայ 7

Պարոն Աստղիկ 8

Սրամելիքի կինը 1 ∼ Մհեր 1 ∼ Հայուհի 1.

Սրամելիք 1 — Դաւիթ 1, Թըլօր – 1ա, Թըռլան – 2 ∼ Խանդութ խաթուն 3

Մհեր, Մհերիկ (–ըկէ–ըկին) 4 ∼ Գեռհար խաթուն 5.

(Երեք ճիւղի՝ Թըլօր–Դաւիթ, էջ 1, Թըլօր–Դաւիթ և Խանդութ խաթուն էջ 44 և Մհեր էջ 51, ողբերգութիւնների մէջ յիշւում են Մելքսեթ քահանայ, Սանասար և Բաղդասար. բայց պատմուածքների մէջ ոչինչ չկայ սոցա մասին։—Քեռի Թորոսի անունը չէ յիշուած և ոչ պատմուածքում)։

1, Թըլօր–Դաւիթ, Ա. էջ 1—3։—1ա, Բ. էջ 7։—2, Ողբերգութիւնների մէջ. էջ 1, 44 և 51։—3, Թըլօր–Դաւիթ և Խանդութ խաթուն. Ա—Գ. էջ 44—50։—4, Մհեր, Ա. էջ 1, Զ. էջ 66, 68, Թ. էջ 73, Ը. էջ 70։—5, Մհեր, Ե. էջ 63։—6, Մհեր, Գ. էջ 58։—7, Մհեր, Դ. էջ 52—60։—8, Մհեր, Զ. էջ 64—67։

№ 8, ՀԷԲ, ՄԿՃ.

ԷՄԻՆԵԱՆ Ազգագրական Ժողովածու հրատարակութեամբ Լազարեան ճեմարանի Արևելեան լեզուաց, Հատոր Բ. ժողովրդական վէպ և հեքեաթ. հաւաքեց Ս. Հայկունի։ Ժողովրդական վէպ 1. Սանասար և Բաղդասար (Մոկաց ճիւղ) էջ 1—14։—2. Դաւիթ և Մհեր (Մոկաց ճիւղ) էջ 19—50. Մոսկուա—Վաղարշապատ 1901։

Կռապաշտ թագաւոր Սենաքերիմ 1 ⊸ Խաչապաշտ թագաւորի աղջիկ 1

Սանասար (մի կուց ծովի ջրից՝ թամամ տղայ) 1 ⊸ Քեռասուն-ձեօղ-Ծամ՝ Կըրխասչու, Զինմա-չինու թագաւորի աղջիկ 2

Բաղդասար (կիսատ կուց ջրից՝ կիսատ տղայ) 1 ⊸ Կըրխասչուի՝ Քեռասուն-ձեղ-Ծամի քոյրը, Զինմաչինու թագաւորի աղջիկ 2

Քեռասուն-ձեօղ-Ծամ 3 ⊸ ձիւչ Մհեր, 2, 3 ⊸ Մսրայ մելիքի կինը տաճիկ 3

Անորդի 2

Զէնով-Ցովան

Մելիք (խօր անուան վրէն) 3

Դաւիթ, 3 Թլոլ—3ա, Թառլան—3բ ⊸ Խանդուիթ խաթուն Թաւրիզցի 4

Պզտիկ Մհեր=Մհեր=Դաւիթ Մհեր 5

(Ողբմիսի մէջ յիշւում է և Ցռան Վերդոն (Դաւիթ և Մհեր, էջ 19), իսկ Քեռի Թորոսը չէ յիշուած ոչ Դաւիթ և Մհերի ողբմիսում և ոչ էլ պատմուածքներում)։

1, Սանասար և Բաղդասար էջ 3—5։—2, էջ 10—14։—3, Դաւիթ և Մհեր, էջ 19—12։—3ա, էջ 29, —3բ, էջ 34։—4, էջ 38 - 39, 42։—5, 19, էջ 44։—6, էջ 24, 29, 42։

№ 9, ՀԷԴ, Շոբ.

ԷՄԻՆԵԱՆ Ազգագրական Ժողովածու հրատարակութեամբ Լազարեան ճեմարանի Արևելեան լեզուաց. Հատոր Դ. հաւաքեց Ս. Հայկունի. Մոսկուա—Վաղարշապատ 1902։ Յաւելուած. Հայ ժողովրդական վէպեր Դաւիթ եւ Մհեր (Շատախի բարբառով) էջ 369—398։

X

Քեռի-Թուրոսի քոյրը 2 ⊸ Մհեր թագաւոր 1 ⊸ Մսրայ մելիքի կինը 1

Զէնով-Ցովան 7

Մսրայ մելիք՝ 1 Մելիք 3

Դաւիթ 1, Թլոլ—4, Թլոր—4ա, Թառլան—4բ.
⊸ Խանդուիթ խանում, խաթուն, Օղան-Տօղան
թագաւորի աղջիկ 5

Մհեր (Դաւիթ խօր անուն դրեց) 6

(Մելքիսէթ քահանան յիշւում է միայն ողբմիսում։—Քեռի Թորոսը ոչ մի ողբմիսում չէ յիշուում բացի այս պատմուածքից)։

1, Դաւիթ և Մհեր, էջ 369—370։—2, էջ 376, 389։—3, էջ 384։—4, էջ 372։—4ա, էջ 376։ 4բ, էջ 382, 394։—5, էջ 385—388, 392։—6, էջ 392։—7, էջ 373, 375։

№ 10, ՀԷԴ, Սրճ.

ԴԱՒԻԹ ԵՒ ՄՀԷՐ (Արարատեան ճիւղ) հայ ժողովրդական վէպ։ Էմինեան Ազգագրական Ժողովածու հրատարակութեամբ Լազարեան ճեմարանի Արևելեան լեզուաց, Հատոր Դ. հաւաքեց Ս. Հայկունի։ Մոսկուա—Վաղարշապատ 1902. Ցաւելուած էջ 399—462։

Ա.

Ըստ Ողորմիսի, էջ 403։

X

Սաղնասար ⁓ Քեառասուն–ձեօղ–Ծամ

Զոլ Մհեր

Թառլան Դաւիթ ⁓ Խանդուխ խանում

Պաստիկ Մհեր

Բաղդասար ⁓ Դեղձուն խաթուն

Զենով–Ցովան Ցռան–Վեզոյ

⁓ Դեօհար խաթուն

Բ.

Ըստ Պատմուածքի։

Կռապաշտ թագաւոր 1 ⁓ Դումրիկ խաչապաշտ թագաւորի աղջիկ 1

Բաղդասար Զոլ ախպէր 2 ⁓ Քեառասուն ձեօղ Ծամ
Պղնձէ քաղաքի թագաւորի աղջիկ 2

Սաղնասար 2 ⁓ Դեղձուն Խաթուն 2

Ցռան Վեզոյ 2 Զէնով Ցովան 2 ⁓ Դոհար խաթուն 4

ա. ⁓ Մհեր թագաւոր 2 ⁓ բ. Մսրայ Մելիքի մայրը 3.

Մսրայ մելիք՝ Մելիք 3

Դաւիթ 3, Թլոլ—3 ⁓ Խանդուխ խաթուն Կապուտիոզ քաղաքի թագաւորի ախչիկ 3ա.

Մհեր 4
(Դաւթի խօր անուան վրէն)

1, Ա. Սանասար և Բաղդասար, էջ 404—405։—2, Ա. էջ 408—411։—3, Բ. Մհեր և Դաւիթ, էջ 411—413։—3ա, էջ 438։—4, Գ. Դաւիթ և Մհեր, էջ 448—451։

№ 11, ԱԱ. Մկբ.

ԹԼՈՒԱՏ ԴԱՒԻԹ ժողովրդական վէպ գրի առաւ Ա. Աբեղեան։ Արտատպուած Ազգագրական Հանդիսից, Թիֆլիս, 1902 էջ 3—75, Մոկաց բարբառ։

X

Հայուէի 2 ՝ Մենծ 1 Մհեր 2 ՝ Մսրայ Մելիքի կինը 2 — Զէնեէվ-Ցէօվան 2 ՝ Շիրին Անախուն (Անախուէ) Գիւհար 8

Մելիք 2, Մսրայ Մելիք 2

Դաւիթ 2, Թլուատ—3, Ծուռ—2, Տղայ—4, Թռլան—5

՝ Խանդիւթ խաթիւն՝ խանում Խոյայ քաղաքից 4

Քեռի Թորոսի՝ Թուրոսի քոյրը, որ հինգ եղբայր ունէր 6

Պզտի-Պզտիկ Մհեր 7

(Ողորմիսի մէջ յիշւում են և Սանասար, Բաղդասար, Քեռասուն-ճեօղ Դեղձուն-Ծամը, Ճարպախար-Քամին և Բաթմանայ Բիւղէն, բայց պատմուածքում միայն վերջին երկուսն են երևում)։

1, Թլուատ Դաւիթ, Ողորմիս, էջ 3, Ա. 4—5։—2, Դ. էջ 8—10։—3, Բ. էջ 7։—4 Դաւիթ և Խանդիւթ խաթիւն, Ա. էջ 28—։—5, Դ. էջ 36. և Ողորմիս էջ 3։—6, Թլուատ Դաւիթ, Դաւիթ և Պզտիկ Մհեր, Դ. էջ 41—43։—7, Բ. էջ 38 և Ողորմիս էջ 3։—8, Ե. էջ 43, Դաւիթ և Խանդիւթ խաթիւն, Դ. էջ 34 և Ողորմիս էջ 3։

1002
7735

№ 12, ԱԱ. Աբբ.

ՍԱՍՆԱՑ ԾՌԵՐ (Արարատեան բարբառով). Ա. Աբեղեան։ Արտատպուած Ազգագրական հանդիսից Թլուատ Դաւիթի հետ միասին, էջ 46—73. Թիֆլիս 1902։

Կռապաշտ թագաւոր 1 ՝ Քրիստոնէի ախչիկ Քեռի Թորոսի քոյրը 1

Սանասար 1 ՝ Քրիստոնէի աղջիկ 1. — Բաղդասար 1 ՝ Քրիստոնէի աղջիկ 1

Իշխան 2 — Աբլաղ 2 ՝ Բաղդատայ կռապաշտ խալիֆայի նշանածը 2

Դառնիկ Ոբբիկ 3 ՝ Քրիստոնեայ «իրենց սերունդից, իրենց ազգից» 3ա,

Ծուռ Դաւիթ 4 ՝ Խանդութ խանում, Մսրայ մելիքի նշանածը, հայրը Ղլաթցի և Մսրայ մելիքի հպատակ 4։

Մհեր, Մենծ Մհեր 4ա

Թլոլ Դաւիթ 4ա

Պզտի Մհեր 4ա։

1, Ա. Սանասար և Բաղդասար, էջ 48—49։—2, Բ. Աբլաղ և Իշխան, էջ 49—50։—3, Գ. Դառնիկ-Ոբբիկ, էջ 53—54։—3ա, էջ 64։—4, Դաւիթ, էջ 64—68։—4ա, էջ 73։

Հ.Ս.Ս.Հ. ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հանրային Գրադարան
Հանրային Գրադարան
7/XI 1922

№ 13, ԼՍԱ, ՆԲԸ.

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ ԵՎ ՄՀԵՐ ժողովրդական վէպ (Նոր-Բայազէտի բարբառով) գրի առաւ Ե. Լալայեան

էջ 1—48։ Արարատեան Գեղագիտական Հանդիսից (1906 տարի թ. 1, էջ 37—82) Թիֆլիս, 1906։

Գլխաւոր մասերի թվարկում

1

Փիլիպոս խանում, ջրով յղանում է 2 Թորոս 2=Գեղի Թորոս

Աբամելիք 4 — Նազլու խանում բաղդատում՝ 7 Իսկ վերջին երեքը՝ Սասունում 8։

Առաջին չորսը ծնուել են Բաղդատում՝ 7 Իսկ վերջին երեքը՝ Սասունում 8։

Վիժիկ Մ/ռ7 վեթ7 ցուտ-7ա ՁԷնով Օհան7 Բռնած կուռիկ7 ձռռ կուռիկ8 թար ձնեղուկ 8 Դաւիթ 8 —

Խանդուլթ խանում՝ կաղզուանի թագաւոր Սրաս-Միրզայի աղջիկ 9

«Պապս անունը կը դնեմ՝ Մհեր, ասաւ Դաւիթը» 10։

1, էջ 5 (=Ազգ. էջ 39).—2, էջ 6—7 (40—41).—3, էջ 11 (45).—4, էջ 12 (46).
5, էջ 23 (57).—6, էջ 32 (66), 46 (80).—7, էջ 15 (49).—7ա, էջ 18 (52), 27 (61).—8, էջ 17—18
(51—52).—9, էջ 31 (65).—10, էջ 40 (74).

ՄՀԵՐ

Մեր ազգային ժողովրդական վէպի գլխաւոր դիւցազներն են Դաւիթ և Մհեր, որոնք առաջին տեղն են գրաւում։ Միւս դիւցազները երկրորդաբար գալիս են վէպի ամբողջութիւնը այսպէս կամ այնպէս լրացնելու։ Վէպի ցարդ հրատարակուած պատմուածքներից հնգի ընդհանուր վերնագիրը սոյն երկու դիւցազների անունն է կրում, ինչպէս որ բնական է և հասկանալի։

Սրուանձտեանցի հրատարակութիւնը կոչւում է «Սասունցի Դաւիթ և Մհեր» (№ 1), Մ. Աբեղեանինը (№ 2), Ս. Հայկունու Շատախի բարբառովը (№ 9) և Արարատեան ճիւղը (№ 10) «Դաւիթ և Մհեր» և Բ. Խալաթեանինը (№ 7) «Թլօր-Դաւիթ և Մհեր» [1]։ Մնացեալներից չորսը Գ. Սարկաւագի երկու փոփոխակները (№ 3 և 4), Ա. Աբեղեանի Արարատեան բարբառովը (№ 12) և Ե. Լալայեանինը (№ 13) «Սասայ Ծռեր։ Իսկ երեքը Դաւիթ զանազան մակդիրներով՝ Խաչիկ վինը Տղայ Դաւիթ և Աղջիկ Խանդութ (№ 5), Ս. Հայկունու Խլաթայ բարբառովը «Սասունայ Դաւիթ» (№ 6) և Ա. Աբեղեանի Մոկաց բարբառովը «Թլուատ Դաւիթ» (№ 11)։

Այս երկու Դիւցազներից էլ, ինչպէս նոյն իսկ վերնագրերից երևում է, առաջին տեղը բռնում է Դաւիթը։ Դաւիթի մասին թէև համառօտ, բայց բաւական բան ասել ենք Արարատի 1906 թուականի Ապրիլի համարի և Ծանօթութեանց մէջ, աւելին ու ընդարձակը և իսրայելացոց Դաւիթ թագաւորի հետ ունեցած նմանութիւնը թողնում եմ ուրիշ անգամուայ համար և այժմ դառնում միւս դիւցազնին՝ Մհէրին։

Բոլոր հրատարակութիւններն էլ ունին Մհէր անունը, բացի Ս. Հայկունու մի՝ Խլաթայ բարբառով պատմուած-

1. Բ. Խալաթեանի հրատարակութեան վերնագիրն է. «Սասմայ փահլեւանցներ կամ Թլօր-Դաւիթ և Մհեր»։ Բանահաւաքի «ընտրած» վերնագիրը, որքան մեզ է յայտնի, ոչ մի վիպասաց չունի և ժողովրդի մէջ չէ լսւում։—

քից (№ 6, ՀԱ.)։ Երեքը (№ 1, ՍՊ. № 2, ՄԱ. և № 5, ԽԱ.) ունին մի մի Մհէր, սակայն այն տարբերութեամբ, որ ըստ երկուսի (№ 1, ՍՊ. և № 2, ՄԱ.) Մհէրը Դաւթի որդին է, իսկ ըստ մէկի (№ 5, ԽԱ.) Մարայ թագաւոր Մհէրը Դաւթի հայրն է։ Այս չփոթութիւն չէ, այլ թէ կայ ուրեմն երկու Մհէր, մի պատմուածքինը պապն է, Մհէր Առաջին, իսկ միւս երկուսինը թոռը՝ Մհէր Երկրորդ, որ իւր պապի անունով է կոչուել։ Եւ յիրաւի ինը փոփոխակում կայ երկու Մհէր (№ 3 ԳՍ. 4, ԳՍ. 7, ԲԽ. 8, ՀԷԲ. 9, ՀԷԴ. 10, ՀԷԴ. 11, ԱԱ. 12, ԱԱ. և 13, ԼԱՀ.)։ Միայն վերջինի (№ 13, ԼԱՀ.) մէջ Մհէր Բ-ի պապը Աբաժեղիքն է, իսկ Ճեացեալ ուրի մէջ Մհէր՝ Պատիկ Մհէրի պապը[1] կոչւում է Մհէր՝ Մեծ Մհէր։

ՄՀԷՐ ԱՌԱՋԻՆ

ՄԵԾ-ԱՌԻՒԾԱՁԵՌ ՄՀԷՐ

Մեծ-Առիւծաձեռ Մհէրը յիշում են տասը փոփոխակ ուրը համառօտ[2] և երկուսն ընդարձակ[3]։ Վեցը միայն

1. Բացի այդ № 12, ԱԱ.-ից երևում է, որ կայ և Երկու Դաւթի (տես և № 6, ՀԱ.), դարձեալ պապ և թոռ. իսկ № 4, ԳՍ-ի խօսքով կարելի է նոյնը ասել հակառակ իւր իսկ հաղորդած տարբեր ճիւղագրութեան։ Մեռածի, ծնողների, ընտանեաց աւելի պապի կամ տատի, ինչպէս առ հասարակ մերձաւոր սիրելիների անունով կոչուելը նոցա յիշատակը պահելու համար, Հայոց, ինչպէս և ուրիշ ազգերի մէջ հնադոյն ժամանակներից ցարդ կայ։

2. Համառօտներն ըստ կարգի են 1. № 12, ԱԱ. Աբբ. Սասնայ Ծռերը, Գ՝ Դաւթի, էջ 73, ունի միայն անունը։—2, № 10, ՀԷԴ. Աբճ. Բ. Դաւթի և Մհէր, էջ 411։—3. № 11, ԱԱ. Մկբ. Թլուատ Դաւթի, Ա. էջ 4—5։—4. № 9, ՀԷԴ. Շտբ. Դաւթի և Մհէր, էջ 369—370։—5. № 8. ՀԷԲ. Մկճ. Դաւթի և Մհէր, էջ 19—20։—6, № 7, ԲԽ. Մկբ. Թլօր Դաւթի և Մհէր, Ա, էջ 1—3։—7, № 5, ԽԱ, Վարբ. Ա.—Դ, էջ 431—432։—8. № 4, ԳՍ. Մկբ. Սասմայ Ծռերը. Գ՝ Դաւթի, էջ 80—83։—

3. Ընդարձակներն են 1. № 13, ԼԱՀ. ՆԲ. Սասմայ Ծռերը,

նորան տալիս են մակդիր, հինգը Մեծ կամ Ջոջ, իսկ մինը Առիւծաձեռ[4]։ Փոփոխակներից չորսը նորա հօր և մօր անունը չգիտեն (№ 5, ԽԱ. 7, ԲԽ. 9, ՀԷԴ. 11, ԱԱ. և 13, ԼԱՀ, ՆԲ. մայրը՝ Փիրզատ, Պապի դուստրը), իսկ հինգը գիտեն, չորսը նորան համարում են Սանասարի որդի (3. ԳՍ. 4, ԳՍ. 8, ՀԷԲ. 10, ՀԷԴ. ըստ ողորմիսի, մինչդեռ պատմուածքում Բաղտասարի) և երկուսը Դաւթի)№ 12, ԱԱ. և 4, ԳՍ.)[2]։ Այս հնգից երկուսը նորա մօրը համարում են Խլաթցի (№ 3. ԳՍ. 12, ԱԱ.), որոնցից վերջինը նորան կոչում է Խանդութ խանում. մէկը, առանց մօր անունը տալու ասում է Թագաւորի աղջիկ (№ 4, ԳՍ.), իսկ երկուսը անուանում են Կրխասչու՝ Քառասուն ձեօղ Ծամ (№ 8, ՀԷԲ. և 10, ՀԷԴ.) և համարում Զինամաչինու Թագաւորի աղջիկ։ Մհէրը միայն մի փոփոխակում կոչւում է Մարայ Թագաւոր (№ 5, ԽԱ.) մինչդեռ ըստ ճեացեալների իսկապէս նա Սասունումն է իշխում և երկուսը նոյնպէս կոչում են նորան Թագաւոր (№ 9, ՀԷԴ-10, ՀԷԴ.)։

Ընդարձակ փոփոխակներից առաջինի բովանդակութիւնը հետևեալն է։—Մարայ կռապաշտ Թագաւորը արշաւում է Հայաստան, ջարդում է Կապուտիոյ նստած մեր Պապ Թագաւորի զօրքը և բազմաթիւ գերիներ տանում, Հայ ազգը փչացնում։ Մի առժամանակ յետոյ նա իւր վաղիրն ուղարկեց Պապի Փիրզատ խանում տասներկու տարեկան աղջիկն ուզելու իւր Փաշայ տղային։ Պապը երկար տա

էջ 7 (41)—12 (46)։—2. № 3, ԳՍ. Աբբ. Բ. «Առուծաձև Մհէր», էջ 20—24։

1. Ճիւղ Մհէր (8. ՀԷԲ.). Ջոջ (10, ՀԷԴ. և 13, ԼԱՀ.)։ Մեծ (11, ԱԱ.), Մեծ-Մհէր (12 ԱԱ.)։ Առիւծաձև (3, ԳՍ.)։

2. № 4, ԳՍ. Մհէր Առաջինն համարում է Սանասարի որդի. սակայն պատմուածքի մէջ Մհէրի որդու մասին ասում է «Ցդան մկրտեցին, անունը դրին Դաւիթ. պապկի անուան վրայ»։ ուրեմն Դաւթի պապիկը՝ Մհէրի հայրը կոչւում էր նոյնպէս Դաւիթ։—

տանուելուց և խորհրդակցութիւնից յետոյ համաձայնում է, որպէս զի «Հայաստունն» ու իւր «թախտը» փրկէ։ Սակայն Փիրզատի եղբայր «հնարագէտ» Թորոսի խորհրդով Պապը տասներկու տարի պայման է դնում։ Մի տարի յետոյ աղջիկն ուզում է իրեն սպանել, որ «լոյս հաւատը» չկորցնի. գնաց սար. տեսաւ մէկ դար, մի դուռ բացուեց, մտաւ աղօթք արաւ. առիւծից ջուր էր գալիս, երեք ճանկ խմեց, դուրս եկաւ, դուռը փակուաւ։ Փիրզատ խանումը «երեխով էր» և մոր կշտամբանքին պատասխանում է. «Երեխան ջրից[1] եղաւ»։ Փիրզատ խանումը ժամանակին մի տղայ բերեց, որ մի ամիսը մի տարուայ չափ պետացաւ։ Մէկ տարեկան տասներկու տարեկանի չափ էր, ինչ անուն դնում էին, չէր վերկալում։ Խաղակից երեխաներին ջարդում է, ձի տուին, գնաց որսի, «էլի այն մատուռին» հանդիպեց, «մատուռը եկաւ երաշ, ասաց քո անունը Մհեր է... Աստուած է քեզ տուել, քո անունը». մատաղ բերէք քահանաներով, որ «Պատարագ անեն, մատուռի դուռը բացուի, որ հմայիլը դնես ծոցդ, թուրը թալես թեդ, գիւրզն առնես ձեռդ. երթաս կռիւ անես կռապաշտի հետ, որ հայի հաւատը չկորչի։ Քո հրեղէն ձին, Քուռկէջալաթը, այրի մէջն է, այդ Աստուած է քեզ վիճակել»։ Քառասուն անծին երինջ մատաղ տարաւ, մատաղի արիւնով երեսը լուաց, որ մուրազն առնի։ Աստուծոյ հրամանով բացուում է մատուռը՝ քարայրը և Մհերը առնում է թագ, վակաս, գիւրզ, հմայիլ և հեծնում Քուռկէջելաթը ու աննպատակ որս անում։ Մատաղ չէ ուտում ասելով. «ինչպէս Աստուած ինձ կամեցել է,... կուշտ եմ»։ Մի պառաւից, որի տղաները կռապաշտ թագաւորը տարել էր սպանել, իմանում է, որ կռապաշտ թագաւորը ջուտով պիտի դայ և նորա մօրը տանի։ Մհերը

1. «Ջրից քհամ գալու» մասին վկայում են և մեւս փոփոխակները (10, ՀԷԴ. Սաղն. և Բաղդաս. էջ 407 և Մհեր և Դաւիթ, էջ 445). ծովի ջրից (4, ԳՍ. Սան. և Բաղդ. էջ 61—63, այլ և № 8, ՀԷՐ. Սան. և Բաղդ. էջ 3—5)։—

գնաց նախ զօրքը և յետոյ թագաւորին սպանեց. մի տարի յետոյ էլ գնում է Մըսր և Փաշային սպանում, 15 օր այնտեղ մնալով, աչքն ընկնում է Փաշայի կնկան, վերադառնում է։ Փաշայի կնիկը տղայ է բերում, անունը Մսրամելիք, որ իւր խաղակիցներից իմանալով, թէ քաֆրի՝ անհաւատի տղայ է, վճռում է «Հայաստունը բրդել»։ Մհերին Վանայ մէկ աղջիկ ուզեցին. կնիկը երկւսրեակ բերեց. «կնքեցին մէկի անունը Սրամելիք, մէկի անումը Սանասար դրին»։ Մեռաւ Պապը, երեք տարուց յետոյ էլ Մհերը (№ 13, ԼԱՀ. ՆԲԲ էջ 5—10[39—44])։

Ըստ երկրորդ ընդարձակ փոփոխակի Մսրայ կռապաշտ Սենեքերիմ թագաւորի աստուածապաշտ տղաները Սանասար և Ասլիմելիք փախչելով իրենց հօր ձեռքից գիմում են Երուսաղէմ, այնտեղից Մուշ՝ Մուշեղ թագաւորին և յետոյ Խլաթ՝ Մելքոնին։ Վերջինիս ձեռնտուութեամբ Սանասարը պսակւում է և հաստատւում Սասունում, իսկ Ասլիմելիքը վերադառնում է հօրն սպանում և այնտեղ նստում։ «Սանասարին եղաւ մէկ տղայ անունը դրին Մհեր» (Ա. փոփոխակով Ասլիմելիքի որդին և իւր հօրն սպանողը Սանասարն է)։ «Մհերը օր աւուր ջոջացաւ, եղաւ տասնուհինգ տարեկան տղայ, իրեն մի ձի սարքեց ու գնում էր որս անելու»։ Մի առիւծ ճանապարհները փակել էր և Սասունին սով էր սպառնում։ «Մհերն առիւծին սպանեց, քաշեց երկու կտոր արաւ». «մինչև հիմա Մհեր էր, այսուհետև եղաւ Առուծաձեւ Մհեր»։ Մհերը գնաց Ասլիմելիքի կուշտը, մի որբևայրի կնիկ սիրեց, որից մի տղայ եղաւ, անունը դրին Մսրամելիք։ Մհերը վերադարձաւ հօր մօտ, Սասուն։ Սանասարը, Խլաթայ Մելքոն թագաւորն ու սորա վեզիրը ձի հեծան, գնացին Մանձկերտ Թեաթորոսի աղջիկը Մհերի համար ուղելու. այդտեղ չըգտնելով Թեաթորոսին դիմեցին Վան, Արզրում, Ղարս և վերադարձան Մանձկերտ։ Քեռի Թորոսը կամ Թորոսիկը եղաւ հարսնեղբայր. գնացին Սասուն, Մհերին պսակեցին։ Մհերին եղաւ երեք տղայ՝ Յոանվեդոյ, Փոխրիկ ճնճղիկ և Դաւիթ։

«Սանասարը մեռաւ. բերեցին Մհեր դրեցին իրենց մեծ, տղեկներն եղան եօթ ութ տարեկան։ Մհերն աղքատացաւ, տղաները վերցրեց և գնաց Մըսր»։ Այստեղ Ասլիմելիքին սպանելով յաջորդել էր Մհերի խորթ տղայ Մսրամելիքը, որ Մհերի երեխաներին պահելու համար պահանջում է և ստանում Ճապաղջուրն ու Քոռէն, և ըստ Ա. փոփոխակի և Ծովասարը՝ որի պատմելով Մհերը որսորդութեամբ և աշխարհակալութեամբ պարապելով, Ծովասարն ու Ճապաղջուկ-Քոռէն նուաճում է և հարկ ստանում և եօթը տարի Սասունը պահեց։ Մհերը վերադարձաւ Սասուն և մեռաւ։ (№ 3, ԴՍ. Աբբ. Բ Առուծաձև Մհեր, էջ 20—24)։

Համառօտ փոփոխակների բովանդակութիւնը մօտաւորապէս հետևեալն է։ Մհերը սիրային յարաբերութիւն է ունենում Մսրայ Մելիքի կնոջ կամ մօր հետ, գլխաւորապէս Մսրայ Թագուհու առաջարկութեամբ կամ հրաւէրով։ Մսրամելիքի մահից յետոյ Իսմիլ խանումը (4, ԴՍ. էջ 80—83) մարդ է ուղարկում և հրաւիրում Մհերին։ Մհերի կինն արգելում է «այլազգու», «տաճկի», «քրդուն» խառնուել, նորա հետ դլուխը մէկ անել։ Մհերը գնում է . . . Մհերի կին Քեռասասուն-Ճեօղ-Ծամը նորա վերադարձին չուզեց դուռը բանալ և երդում կերաւ «մինչև քառասուն տարի» Մհերի կուշտ չպառկի։ Մհերն էլ երդուեց, նոր կինը դուռը բաց արաւ, Իսմիլ խանումը մի տղայ ունեցաւ, անունը դրին Մելիք կամ Մսրամելիք և կամ Շուն Մելիք։—Մհերն սկսաւ մտածել, «ես տաճկու ճրագ վառեցի, հայու ճրագ հանգցրի», դիմեց կնկան ասելով «Մեր հայու ասողը խաւարել է, մի բան անենք, թերևս մեր հայու ճրագը կպնի»։ Սկսան մտածել կրճատել երդման ժամանակը, վարդապետներն էլ մէջ ընկան քառասուն տարին քառասուն օր հաշուեցին, «ելան իրար մօտ գնացին 9 ամիս, 9 օր, 9 վարկեան յետոյ մէկ տղայ եղաւ, մկրտեցին, անունը դրին Դաւիթ, պապկի անուան վրայ» Մհ. պատուիրեց Դաւիթին տանեն Մսրամելիքի մօտ,

որ պահի մինչև ծըծից կտրուի և ապա չուտով Մհերն ու իւր կնիկը մեռան իբրև երդմնազանց։

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

Կարդալով ժողովրդական նոր վէպում, որ Մսրայ մելիքի մահից յետոյ նորա կին Իսմիլ խանումը մարդ է ուղարկում և հրաւիրում Մհերին գայ իւր հետը «գլուխը մէկ անի», «խառնուի» և լինի Մսրայ թագաւոր, ակամայ յիշում ես հայոց հին զրոյցը։ Ասորեստանի թագուհին Շամիրամ, որ ասորական իշտարն է[1], ճիշտ նոյն ձևով հրաւիրում է Արային Նինուէ,[2] այժմ Մուսուլ, որ չփոթուած է Մըսր՝ Եգիպտոսի հետ։ Արդէն մեր ժողովրդական վէպը կապում է Ասորեստանից Հայաստան փախած Սենեքերիմի երկու որդոց Ադրամելիքի և Սանասարի հետ։ Զորս փոփոխակներ կապում են Մհերին դոցա հետ և միայն երկուսը Դաւթի, որ Սասնոյ տէրն է։ Բնականաբար մեր Մեծ Մհերն էլ և բոլոր Սասմայ ծռերը պէտքէ Արծրունի լինին։ Սակայն իրօք մեր դիւցազների մեծ մասը Մամիկոնեան են, և եթէ և Արծրունի են համարուել, կամ իրօք Արծրունիք էս կան, պատճառն այն է, որ Մամիկոնեանք Ը. դարում նուաղելով Արծրունիք զօրացան, Ժ. դարում թագաւորութիւն հիմնեցին և աւելի երկար տևեցին քան Մամիկոնեանք և նոյն իսկ Բագրատունիք։ Այնպէս որ վէպի վերջնական կազմակերպութեան ժամանակ ԺԴ—ԺԵ. դարերում ժողովրդի յիշողութեան մէջ աւելի վառ էր մնացել Արծրունեաց յիշատակը, մանաւանդ որ ոչքա հնում Սասնոյ տէր էին, ինչպէս Մամիկոնեանց նուաղելուց յետոյ Տարօնին տէր դարձան. իսկ ազգակցական կապը գալիս էր այդ զուգորդութեան գաղափարը ամրապնդելու։ Ոչ միայն Դ—Ժ. դարը կային խնա-

1 Իսմիլ (№ 4, ԴՍ) կազմուած է իշտար և Շամիրամ անուններն խառնուրդից, իսկ Շըմշիկ (№ 13) կամ Շըմշըմ (№ 1, ՍՊ. Ը, էջ 24) Շամիրամի փաղաքշականն է։—

2 Մ. Խոր. Ա, ԺԵ, էջ 34. Վենետիկ 1865։

մական և ազգակցական կապեր այլ և դարեր յետոյ, ինչպէս այդ շեշտում են յիշատակարաններ[1] և Թովմայ Արծրունու շարունակողը[2] պարծենալով մանաւանդ քաջ Վարդանով։ Անշուշտ մեր ժողովրդական վէպում կան շատ Արծրունիք, որ արդէն ցոյց ենք տուել Արարատի անցեալ տարուայ համարներում, թերևս էլի տեսնենք. մանաւանդ որ Արծրունիք էլ Համազասպներ ունին, ինչպէս և Մամիկոնեանք, իսկ Համազասպ Մամիկոնեան Կիւրոպաղատը մեր վէպի Մհէր՝ Մեծ Մհէրն է։

Սակայն նախ մի քանի խօսք Պապ թագաւորի մասին։ Պապի Կապուտկողի թագաւոր լինելը մենք արդէն բացատրել ենք[3]։ Պապի Հայր Արշակ Բ-ը Կամսարականների տոհմը ջնջելով Արշարունիքում վերաշինում է Արտագերս բերդը, որ յետոյ Կապոյտ կոչուեցաւ։ Այս բերդում փակուած Փառանձեմն սպասում էր իւր որդու, Պապի, գալստեան։ Իսկ Մամիկոնեանց ազգակցութիւնը սոյն թագաւորի հետ յուշիկ է այն պատմական իրողութեան, որ Մանուէլ Մամիկոնեանը իւր դուստրը տուել էր Պապի որդի Արշակին կնութեան։—Պապի դստեր գերբնական յղացումը և վերջինիս դիւցազն որդու Մհէրի ծնունդը իւր պարագաներով, որ Պապին տալիս է մի տեսակ խորհրդաւորութիւն և գերբնական յատկութիւն, սոյնպէս ունի իւր պատմական հիմքը։ Ըստ Ամմիանոսի Պապը Տարսոնից երեք հարիւր հոգով Վաղէս կայսեր լարած դարաններից և հետամտութեանց հակառակ փախչում է Հայաստան։ Այս

1. «Եւ ի տէրութեանն Սասնոյ Վիգէնոյ . . . և ի Թուականութեանն Հայոց ՈԺԸ (=1169) հրամանաւ . . . թագուհւոյ Մէլիքսոյ, ամուսնոյ Վիգէնոյ, որ է յազգէ Արծրունի և ի շառաւիղէ Սրբոյն Վարդանայ դստեր մեծի իշխանին Մոկաց Հմայեկի» (Ալիշան. Հայապատում. Բ. § 293, էջ 393)։—

2. «Արծրունի թագաւորաղն պռատու կուրապաղատ» Աբեղբլմսեհը կոչում է «ազգակից մեծ և քաջ նահատակին Մամիկոնեին Վարդանայ» հայոց ՇԽԶ (=1197) թուին. իսկ աւելի ուշ Աղթամարայ հայրապետ Դաւիթը նոյնպէս կոչում է «ազգակից Վարդանայ և Թոռնկայ (Արծրունի) մարտիրոսացն» (Թ. Արծր. Դ, ԺԲ, էջ 311 և 314)։—

3. Արարատ 1906. դեկտեմբեր էջ 870։

հրաշալի ազատումը վերագրեցին Պապի կախարդութեան. որպէս թէ Պապը հմուտ կիրկէական դիւթութեան կարողացաւ պրծնել և որ այս դիւական արուեստով կարող էր կայսեր անգամ ընասել[1]։ Անտարակոյս այս կարծիքի արձագանգն է և մեր պատմութեան մէջ իբրև ժամանակակիցների կամ կամ գոնեա Ե. դարու հայոց համոզմունք հետևեալը. «Մինչդեռ Պապը փոքրիկ նորածին տղայ էր, այն ժամանակ նորա անօրէն մայրը, Փառանձեմ, ձօնեց նորան դեւերին, ուստի տղայութիւնից լի էր դեւերով։ Եւ որովհետև միշտ դեւերի կամքն էր կատարում, ուստի չէր էլ կամենում կամ կարողանում բժշկուել, որովհետև միշտ վարժեցնում էր իւր անձը դեւերով. և կախարդանքով երևում էին դեւերը նորա մէջ, և ամեն մարդ բաց աչքով տեսնում էր դեւերը . . . այդորման ժամանակ օձերի կերպարանքով . . . և ամենքը . . . վախենում էին նորան մօտ դնալ»[2]։ Համարեա միևնոյնը կրկնում է պատմագիրը և մի այլ գլխում[3]։—Հիմա այսու ևս պէտք է հասկանալի դառնայ այն խնամութիւնը կամ ազգակցութիւնը որ կայ Մամիկոնեանց և Պապի մէջ և թէ ինչու ըստ վէպի «Դաւթի ազգը դեւերստաններից է», որին հաւատացել են դարեր առաջ հայ ժողովուրդը և ցայսօր վիպասացները[4] և թէ ինչու Մհէր՝ Պատիկ Մհէրի տատմերը երեխայի պորտը կտրելիս վիժելով փախչում է և ասում «վիշապ է, ինձ քաշեց ձեւեց»[5]։ Վերջին պարագան ևս կապում է Մհէր Մհէրիկին դև Արտաւազդի հետ։ Սակայն Պապի և առհասարակ Դ. դարու Արշակունի թագաւորների և Մամիկոնեանց նոյն դարու զօրավարների, ինչպէս և նոցա Սասմայ Ծռերի հետ ունեցած կապի մասին՝ մենք առանձին երկար խօսելիք կունենանք անկախ Ջոլանց տան վէպից։ Ուստի այժմ դառնանք Մհէրին։—

1. Ա. Մ. Գարագաշեան, Քննական Պատմ. Հայոց Գ. Հատոր. Դ. § 12, էջ 153. Տփխիս 1895։

2. Փ. Բուզ. Ե, Լբ, էջ 219։

3. Փ. Բուզ. Դ, Խդ, էջ 159։

4. № 8, ՀԷԲ. Մկճ. Դաւիթ և Մհեր, էջ 49—50։

5. № 13, ԼԱՀ. ՆԲ. Սասմայ Ծռեր, էջ 74։—

Մհէր անունը յիշւում է Մամիկոնեանց մէջ ԺԲ. դարում։ «Զորդուանէլ որդի Տաճատայ քաջի Մամիկոնոյ» «իշխան մեծի տէրութեան Տարօնոյ և ամենայն Հայոց» մի հրամանագրով ՇԾԳ (=1104) թուականին սուրբ Առաքելոց Ղազարու վանքին պարգևում է մի գաստակերտ իւր սրոշ սահմաններով, ինչպէս ասում է «ի յիշատակ ինձ և ծնողաց իմոց . . . և նախնեաց իմոց քաջ արանցն Վեսենա և Մեհերա, որք յառաջ քան զմեզ տիրէին յայսմ աշխարհիս»[1]։ Այս Մհէրի մասին այս մի քանի բառից աւելին մեզ յայտնի չէ։

Դիւցազներգութեան Մհէրը կնութեան է առնում Թեւաթորոսի աղջիկը, իսկ մենք արդէն ցոյց ենք տուել, որ վէպի Թեւաթորոսը պատմութեան Թէոդորոս Ռշտունին է[2]։ Մամիկոնեանց և Ռշտունեաց խնամութիւն յիշատակում են մեր պատմագիրները Դ. դարուց։ Տիրան Բ-ի կոտորածից ազատւում են Մեհենդակ Ռշտունու Տաճատ և Վաչէ Արծրունու. Շաւասպ որդին Մամիկոնեան Արտաւազդ և Վասակ զօրավարների ձեռքով։ Վերջին երկուսը առաջին երկուսին տարան իրենց Տայոց աշխարհի ամրոցները. «Եւ սնուցանում էին այն մանուկներին, Շաւասպին և Տաճատին, և իրենց դուստրները նոցա կնութեան տուին, ուստի դարձեալ միւս անգամ այն ազգերը սերուեցան»[3]։—Եթէ ի նկատի առնենք այն հանգամանքը, որ Թէոդորոս Ռշտունու զօրանալով նսեմանում են Արծ-

1. Հայապատում Բ. § 294, էջ 396—397. Վենետիկ 1901։

2. Արարատ 1906, դեկտեմբեր էջ 876—879։

3. Փ. Բուզ. Գ. ժը, էջ 47։—Նոյն դարում Մանուէլ Մամիկոնեանի ժամանակ յիշւում է «Գարեգին, տէր դաւառին Ռշտունեաց» . . . «Այս Գարեգին փեսայ լեալ յառաջ Համազասպէի, զբոյր նորին Համազասպուհի անուն ունէր կին», իսկ այս Համազասպէ՝ Համազասպ կամ Համազասպեանը «էր սեպուհ մի ի Մամիկոնեան տոհմէն» (Բուզ. Ե. լէ, էջ 249—250) և եղբայր Վարդան Մամիկոնեանց Նահապետի և ուրացեալ Վահանի։ Վերջինս հօրէ մէկ էր, բայց ոչ մօրէ մէկ (Բուզ. Դ. ծթ, էջ 182—184. տես «Բոյրաթիւ» բառը)։

բունիք, որ Թէոդորոսի որդին Վարդ Պատրիկը կոչւում է «իշխան Արծրունեաց»[1], որով այս երկու տոհմերը կարծես միևնոյն են դառնում, այն ժամանակ պէտք է ասենք Ռշտունի-Արծրունեաց խնամութիւնը Մամիկոնեանց հետ շարունակուել է ոչ միայն Ե. այլ և յետագայ դարերում մինչև ԺԲ. դարը և այս տոհմերի խսպառ անհետանալը[2]։ Իսկ Է. Դարում կան փոխադարձ ամուսնութեան երկու դէպք յիշուած։ Ըստ Յովհան Մամիկոնեանի Վարդ Պատրիկը կին էր առել Մշոյ և Խութայ, Տարօնոյ և Սասնոյ իշխան Մուշեղի Մարիամ անունով դուստրը։ Այս Մուշեղը, ինչպէս ցոյց ենք տուել Ազգային ժողովրդական վէպի Մշոյ Թագաւոր Մուշեղն է[3]։

Այն բոլորից յետոյ, որ մենք Արարատի 1906 թուի դեկտեմբերի համարի ծանօթութեանց մէջ ասել ենք, եթէ մէկն ուզենայ Յովհան Մամիկոնեանի այս հաղորդած տեղեկութիւնը պատմական ենթադրել միայն յուշիկ համարել, անհերքելի է սակայն, որ մի Մամիկոնեան Թէոդորոս Ռշտունու փեսան է, որ վէպն էլ ունի։ Ժամանակակից պատմագիրն ասում է. «իսկ Ռշտունեաց տէր Թէոդորոսն ինքը և իւր փեսայ Մամիկոնեանց տէր Համազասպը դարանակալ եղան Աղթամար կղզում»։[4]

Արդեօք Համազասպը մի պատուանուն կամ մակդիր[5] ունէր, որ Մհէր անունը մեզ յիշեցնէր, չգիտենք. թէ Համազասպ անուան Համբ ժողովրդի ցարդ սովորա-

1. Յովհան. Մամիկոն. Պատմ. Տարօնոյ Ա. էջ 9. Վենետիկ 1889։

2. Ե. դարում Հիւսուածք Գ. հատոր. § 8, էջ 94—96։—Թ. դարում Թովմ. Արծրունի Գ. ժգ, էջ 194։—ԺԲ. դարում և այն Հայապատում Բ. § 293, էջ 393 և Թովմ. Արծրունի (շարունակողը) Դ. ժբ, էջ 311 և 314։

3. Արարատ 1906, դեկտեմբեր, էջ 871—875։

4. Սեբէոս Գ. լե, էջ 143։

5. Մեշտ էլ եղել է այդ՝ թէ հնումը և թէ այժմ։ Է. դարում «Վարդիկ իշխանն Մոկաց, որ կոչէր Ակնիկ» Սեբէոս Գ. Լ, էջ 109։

կան կրճատումը կարող էր Մհо, Մհէ[1] փոխուելով Մհէր-ի հետ ժողովրդի բերանում նոյնանալ, անհաւանական չենք համարում։ Ինչ որ էլ լինի պատմակա՞ն իրողութիւն է, որ Համազասպ Մամիկոնեանը Թէոդորոս Ռշտունու փեսան է, ինչպէս ժողովրդական վէպի Մհէրը Թէաթորոսինը։

Ուրիշ հանգամանքներ ևս մեզ տեղիք են տալիս պնդելու մեր ասածի վրայ, թէ Մամիկոնեան Համազասպը վէպի Մհէրն է։

Պատմագիրն ասում է, որ Թէոդորոս Ռշտունու մահից յետոյ «Մեր հայոց աշխարհի իշխանութիւնը իւր ձեռքին ունէր Մամիկոնեանց տէր Դաւթի[2] որդի Համազասպը, ամէն կողմից առաքինի[3], այսինքն քաջ։ Դարձեալ Սեբէոսը գիտէ, որ Համազասպի, մի եղբայրը պատանի էր[4] Դամասկոսում, իսկ Յովհաննէս կաթուղիկոս պատմաբանի վկայութեամբ Համազասպի յաջորդն էր իւր եղբայրը Գրիգոր, «Հայոց մեծ հայրապետ Ներսէսը (Գ. Շինող) հայոց նախարարների հետ միասին խնդրում է Մաւիա ամիրապետից, որ Հայոց իշխանական պետութեան վերայ կացուցանէ Գրիգոր Մամիկոնեանին, որ ի պատանի առ նմա կացեալ էր»։ Գրիգոր Մամիկոնեանի հրամանով Անաստաս կաթուղիկոսը մկրտում է արքայազն Սուրհան

1. Ղարաբաղցոց բարբառով հիմա(կ)=մինեկ, ուրիշները մհաը, մկա։

2. Այս Դաւթի Մամիկոնեանն ունէր և մի ուրիշ որդի Մուշեղ անունով, որ սպանուել է ըստ Սեբէոսի Հերթիճանի (=Կադիսիյա 636 կամ 637 թուականին, Թ. Նէօլդէքէ Պատմ. Սասանեան էջ 87, Վաղարշապատ 1896։ Ըստ Ստէնլի Լէն-Պուլի 635 թուականին, I. էջ 4) օրեր տևող ճակատամարտում Ռոստոմ պարսիկ զօրավարի հետ։ «Էր անդ և Մուշեղ Մամիկոնեան որդի Դաւթի զօրավարն Հայոց երեք հազար սպառազինօք, և Գրիգոր իշխանն Սիւնեաց տէրն Ռ. արամբ . . . մեռաւ և զօրավարն Ռըստամն. և սպանին և զՄուշեղ երկու քեռորդւովքն, և զԳրիգոր Սիւնեաց տէր մինով որդւով»։ Սեբէոս Գ. I., էջ 107։

3. Սեբէոս Գ, I.ը, էջ 150։

4. Սեբէոս Գ, I.ը, էջ 152։

պարսիկին և «ինքը մեծ իշխանը ընդունելով նորան սուրբ աւազանի ջրից, նորան յորջորջում է Դաւիթ իւր հօր անունով»[1]։

Արդ մենք երկու պատմուածքում տեսանք որ Մհէրը, թէև փոքրը, Դաւթի որդին է. իսկ ըստ №-12 ի Մեծ Մհէրը Ծուռ Դաւթի տղան է։ №-4, որ եղած փոփոխակների մէջ ամենահարուստն է իւր հաղորդած պատմական անձերով և տեղեկութիւններով, ասում է, թէ Մհէրին «մէկ տղայ եղաւ, տղէն որ մկրտեցին անուն դրին Դաւիթ, պապկի անուան վրայ»։ Զնայելով որ այդ փոփոխակի ճիւղադրութեամբ Խանդութ խաթունի այր Դաւիթը Սանասարի թեամբ Խանդութ խաթունի այր Դաւիթը Մհէրի որդին, իւր պապկայ անունով Դաւիթ է կոչւում։ Պարզ է ուրեմն վէպը կապելով Մամիկոնեանց և Արծրունիներին միմեանց հետ, անդիտակցաբար պահել է և իսկականը, որով Մհէրի հայրն էլ Դաւիթ էր կոչւում, ինչպէս և Համազասպի հայրը։

Սեբէոսը շարունակում է Համազասպի մասին, թէ «ընդանեսուն, ընթերցասէր և ուսումնասէր էր, և իւր հայրենի աղգի՝ ցեղի զինուորական հրահանգների մարզմունքներին վարժ ու կիրթ չէր, ճակատ չէր մղել և թըշնամիների ղէմքերը չէր տեսել։ Եւ արդ սկսաւ հախանձել իւր հայրենի տան քաջութեան բնութեանը՝ յատկութեանը, որ ջերմեռանդ փութով քաջութեան գործ կատարէ լիապէս ըստ իւր նախնիքների վարժութեանց, վերևից՝ Աստծուց խնդրելով առաջնորդութիւն և յաջողութիւն իւր անձի համար քաջութիւն կատարելու»[2]։—Ակամայ յիշում ես Մհէրի պարզամիտ պատանեկութեան աննպատակ խաղերը, որսորդութիւնը. թէ ինչպէս նա երազ է տեսնում, ջերմեռանդութեամբ մատաղ է տանում քառասուն երինջ, մուրազն առնում և հրեղէն ձին և զէնքերը վիճակւում

1. Յովհաննէս կաթուղիկոս էջ 51—52, Մոսկվա 1853։ Եր. տպագրութիւն 1867. Ի, էջ 114—117։

2. Սեբէոս Գ. լը, էջ 150։

են նորան Աստծուց։ Պատանեկութեան օրերում նա իրաք թշնամու երես չէր տեսել և ճակատ չէր մղել, մինչև որ պատուից իմանալով իրերի դրութիւնը Աստծուց վիճակուած իւր ձիով ու զէնքերով քաջութեան հրաշքներ է գործում։

Ըստ վէպի Հայաստանի քաղաքական դրութիւնն այսպէս է։ Մսրայ կռապաշտ թագաւորը Հայաստանն աւերում, գերիներ է վարում, և Կապուտակոզ նստած Պապ թագաւորը իւր թախտի և երկրի ապահովութեան համար խոստանում է իւր աղջիկը տալ Մսրայ թագաւորի տղային, որ սակայն տասներկու տարով յետաձգւում է։ Մէջտեղ իմանալով երկու անգամ պատերազմ է մղում և քաջութեամբ հաղթում է Մրը։ Այնտեղ ունի ապօրինի մի զաւակ, որին եօթ տարուց յետոյ յանձնում է իւր երեխաները պահպանելու, ուրեմն վերջն ընկճւում է և հալածակում։

Մօրիկի և Խոսրովի 591 թուականի դաշնադրութեամբ համարեա ամբողջ Հայաստանը Յոյների ձեռքին էր մինչև 640 թուականը։ Այս ժամանակը վէպում Դ. դարու հռոմոց ազդեցութեան շարունակութիւնն է համարուել, ոչի գլխաւոր ներկայացուցիչն իրաք Պապն էր։ Ըստ Բուզանդի Կապուտակոզ–Կապոյտ բերդն առնում է Պարսիկներից և ի միջի այլ բազմաթիւ հայ տիկին գերիների հետ տարուում է և Պապի մայր Փառանձեմը[1], իսկ վէպում դուստրն են ուզում տանել։

Արաբացոց արշաւանքներին, որ սկսւում է 640 թուականին[2], ըստ Սեբէոսի աչքի են ընկնում Թէոդորոս Ռշտունին և իւր փեսայ Համազասպ Մամիկոնեանը։ Արաբները Հայաստան են մտնում հարաւից «Ասորեստանի կողմից Զորոյ ճանապարհով՝ առնում են Տարօնոյ աշխարհը, Բզնունիքն ու Ակիովիտը։ Եւ Բերկրու Զորից ճանապարհ բռնելով Որդսպու և Կոգովիտ անցնելով թափուեցան Այրարատ։» Դուինն առնուեցաւ[1], 35000 զերի տարուեցան Ասորեստան (Ասորիք)։ Թէոդորոս Ռշտունին Կոգովտում դարանակալ եղաւ, բայց յաղթուեցաւ[4]։ Ինչպէս առհասարակ այնպէս էլ այս դէպքում գերիների մէջ կային ի հարկէ «կանայք և մանկտիք»[2]։ Ժողովրդական վէպում Դուին մայրաքաղաքի տեղ բռնել է Կապուտակոզ–Կապոյտ բերդը, որ յետոյ արաբացոց շրջանում, մանաւանդ Սմբատ Ա-ի պաշարմամբ Յուսուֆի ժամանակ յայտնի է և տարուած գերիներով։

Ապա Սեբէոսը խօսում է Իսմայէլացոց՝ Արաբացոց և Հայաստանի տէր Յունաց հաշտութեան մասին, որ կնքւում է Դամասկոսում Հայաստանի յունաց Պռոկոպ զօրավարի ձեռքով Մաւիասի՝ Մուաւիայի և Կոստանդ Բ. կայսեր ժամանակ[3]։ Այնուհետև նա չեշտում է երկու երեք անգամ, թէ այդ խաղաղութիւնը լուծուեցաւ խաղաղութեան պայմանի երրորդ և Կոստանդի թագաւորութեան տասներկուերորդ տարին[4] այն է 652/3 թուականին։ Արաբացիք արգելում էին Կոստանդի մուտքը Հայաստան ասելով. «Հայաստանը մերն է»։ Այս էլ ահա վէպի խաղաղութեան տասներկու տարին։

Համազասպ Մամիկոնեանը, որ իւր աներ Թէոդորոսին անշուշտ միշտ գործակից էր, ինչպէս այդ երևում է և երկուսի Աղթամար կղզում դարանակալ լինելու անց-

1. Փ. Բուզ. Դ, ԺԵ, էջ 174—176։

2. Dr. Mkrtitsch Ghazarian. Armenien unter der Arabischen Herrschaft, էջ 16. Marburg 1903։

3. Ըստ Ղ. Ալիշանի 640 թուի հոկտեմբերի 6-ին (Այրարատ, § 171, էջ 407) ուրիշները 642-ին կամ 647-ին, տ. M. Ghazarian էջ 28—29։ Սեբէոսն ասում է Տրէ ամսի 20-ին ուրբաթ օր (Գ. Ա, էջ 109)։

1. Սեբէոս Գ, Ա, էջ 108—109։

2. Ղևոնդ վ. Պատմ. Գ. էջ 9։—Կարնոյ առումից յետոյ Իսմայէլի զօրքը «Զամենայն եկեղեցիս մերկացոյց։ Եւ կալաւ պատանդ զգլխաւոր իշխանս աշխարհին և զկանայս և զուստերս և զդստերս բազմաց» ասում է Սեբէոսը Գ, Ա.ը, էջ 150։

3 Սեբէոս Գ, ԼԳ, էջ 118։

4. Սեբէոս Գ. ԼԵ, էջ 137, 139, 143 (յամին մեծասաներորդի)։

քից և հաւանօրէն Թ. Ռշտունու հիւանդութեան ժամանակ[1] գլխաւոր զեկավար, վերջինիս մահից 654/5 թուականից յետոյ դառնում է Հայաստանի իշխան։ Համազասպն իրօք 660 ական թուականի վերջերին ապստամբում է Արաբացիներից, երբ սոքա ունենալով իրենց մօտ Դամասկոսում 1777 դերի նշանաւոր նախարարական տոհմերից, մանաւանդ Մամիկոնեաններից. «Պահանջում էին այլևս ուրիշ իշխաններ իրենց կանանցով Ասորիք։ Այս պատճառաւ մահը կեանքից լաւ համարելով հեռացան նոցա հպատակութիւնից»[2]։ Ճիշտ այսպիսի մի պատճառով Մհէրը՝ մօրը Մսբը չուղարկելու համար կռիւ է մղում։ Առաջին կռուին Մհէրն սպանում է Մսրամելիքի զօրավարին, իսկ երկրորդին՝ Մսրայ Մելիքին և հանում Մըսր։ Այս էլ անդրադարձումն է այն պատմական իրողութեան, որ չեշտում է Սեբէոսը, և նորանից յետոյ ուրիշները, թէ երբ որ Իսմայէլի որդիք՝ արաբները արևելք արշաւեցին և համարեա բովանդակ առաջաւոր Ասիային մինչև Հնդկաստան տիրեցին «Ոչ ել ընդ նոսա և Թագաւորն նոցա Ամռ»[3] այն է Օմար։—Վէպի երկու կռիւը արդեօք Արծափի[4] և Մարդոցէսի[5] փառաւոր յաղթութիւններն են, որտեղ Թ. Ռշտունին այնպէս փայլեց և սարսափ տարածելով արաբացոց վրայ յունաց չար նախարձը ևս գրգռեց. թէ գուցէ և արաբացոց արշաւանքների երկու գլխաւոր շրջանն է, երբ սոքա վերջում մինչև իսկ Կարին հասան։ Անշուշտ, ինչպէս վերևում մասամբ ցոյց տուինք, Համազասպ Մամիկոնեանը միշտ գործակից է եղել իւր աներոջ յաղթանակներին, իսկ սորա հիւանդութեան ժամանակ, մանաւանդ մահուանից յետոյ գլխաւոր և միակ զեկավարը Հայաստանի։ Հասկանալի պիտի լինի ուրեմն, թէ ինչու ժողովրդական վէպը բոլորը միայն իւր դիւցազնին է վերագրում։

Վիպական են բացի քառասուն թուից հազարը, ինը, երեքը, բայց մանաւանդ եօթը[1]. սակայն Մհէրի դէպքում Համազասպի պատմական անցքերում երևում են և այս վիպական թուերը։ Վէպի տասներկու տարուան խաղաղութեան խզումը, ինչպէս ասացինք, ակնարկ է 652/3 թուականին կատարուած պատմական իրողութեան։ «Այս տարին հայերն ապստամբեցին, հեռացան յունաց թագաւորութիւնից և հնազանդեցին Իսմայէլի արքային՝ ծառայելու... դաշինք կռեցին Թ. Ռշտունեաց տէրը Հայոց բոլոր իշխաններով... Իսմայէլի իշխանը խօսում էր նոցա հետ և ասում։ «Այս թող լինի իմ հաշտութեան ուխտը իմ և ձեր հետ քանի տարի որ դուք կամենաք, և ձեզնից եօթը տարի հարկ չեմ առնիլ»[2]։ Այս է վէպի ակնարկած Մհէրի թագաւորութեան եօթն ութ տարիները, որ իրօք պատմական է 652/3—659/60, և 659/60 թ. Համազասպի մահուան տարին է։ Այնուհետև Մհէրը աղքատանալով իւր զաւակներին Մսրամելիքին պահ է տալիս։—Սեբէոսի պատմութեամբ Համազասպի երեք որդիքն են պատանդ Դամասկոսում, իսկ Մուշեղ Մամիկոնեանի չորսը[3], ըստ ազգային ժողովրդական վէպի Մհէրի երեք[4] որդոց պահելու համար Մսրամելիքն ուզում

1. Սեբէոս Գ, լզ, էջ 146։
2. Սեբէոս Գ, լը, էջ 152։
3. Սեբէոս Գ, լ, էջ 109։
4. Սեբէոս Գ. լբ, լգ, էջ 116—118։ Ղևոնդ վ. Պատմ. Գ, էջ 11։ Արծափի ճակատամարտը տեղի է ունեցել 643-ին. Այրարատ ԺԹ, էջ 509։ Dulaurier, Recherches chr. էջ 231—232։ Ըստ Դիւլորիէի օգոստոսի 10-ին, իսկ ըստ Ալիշանի 11-ին։
5. Ղևոնդ Պատմ. Բ, էջ 7։ Սեբէոս Գ, լե, էջ 138։

1. Շատ ազգերի մէջ, հմմ. Die Sieben und Neunzahl im Kultus und Mythus der Griechen. von W. H. Bocher. XXIV Band der Abhandl. philol—histor. Klasse der Künigl. Sächs. Gesell. der Wissensch.[1]։
2. Սեբէոս Գ. լե, էջ 138. Ս. Պետերբուրգ 1879։ Այս հրատարակութեան «զերբեամ մինն վոխեցինք եօթն ամ, որ ունեցել է Կ. Պոլսի հրատարակութիւնը, տես M. Ghazarian, Armenien էջ 30, ծանօթութիւն 4։
3. Սեբէոս Գ. լը, էջ 152։
4. Ջ 3, ԳՍ. Ասբ.

է Ճապաղջուրն ու Քոդէն։ Այսպիսով ուրեմն ըստ պատմութեան եօթը նշանաւոր Մամիկոնեան կայ պատանդ. ըստ վէպի[1] Մհէրն ունի եօթը թոռ, որոնցից առաջին չորսը ծնուել են Բաղդատում և վերջին երեքը Սասունում։ Վիպական պէտք է համարել և Դամասկոսի հայ պատանդների թիւը, որ տալիս է մեզ Սեբէոսը Ռ. Զ. Հ. Ե. որ մենք ուղղում ենք Ռ. Զ. Հ. Է.=1777[2]։

Վէպի Մհէրի և պատմագրութեան Համազասպ Մամիկոնեանի այսքան նմանութիւնները մեզ տեղիք տուաւ լրացնել պատմագրութեան մի պակաս տեղեկութիւն Համազասպի մասին։ Ըստ վէպի Մհէրը գնում է Մսրը՝ այսինքն Եգիպտոս. բայց ոչ ժամանակակից Սեբէոսի և ոչ էլ նորանից օգտուող պատմագիրների Յովհաննէս պատմաբանի և Ասողիկի մէջ ոչինչ չգտանք Համազասպի Դամասկոս գնալու մասին։ Վէպի աւանդածը կարելի էր բացատրել այնու, որ Համազասպի եղբայր Գրիգոր Մամիկոնեանն է գնացել Եգիպտոս-Մսրը, սակայն նա էլ պատանդ էր, ինչպէս ասում է Սեբէոսը։ Կարելի էր հաստատուն կերպով պնդել այդ բանի վրայ, ի նկատի առնելով որ Աղուանից Զուանշիրն աւելի հեռաւոր ճանապարհ կտրելով Հայաստանով Դամասկոս անցաւ[3]։ Սակայն մենք ունինք և հետևեալ անհերքելի ապացոյցը։

«Դաւիթ Թարգման Տարաւնացի զճառս զայս յետոյ դարցոյց ի յունէն ի հա բարբառ ի Դամասկացւոց քաղաքին, հրամանաւ Համազասպա Կորապաղատի Մամիկոնենից

1. № 13, ԼԱՀ. ՆԲ։

2. Սեբէոսը, որանից առնելով և Յովհաննէս կաթուղիկոս պատմաբանը (Մոսկուայի հրատ. էջ 51. Երուսաղէմինը ԺԹ, էջ 113), գնում են Ռ. Զ. Հ. Ե։ Ի նկատի առնելով սոյնանման թուերի ընդհանրապէս կլոր՝ վիպական գործածութիւնը և մանաւանդ հազար և երբեմն հետևող երկու եօր թուերը, ուղղեցինք Ռ. Զ. Հ. Է. մանաւանդ որ ձեռագրերում շատ յաճախ Ե և Է շփոթւում են։ Եւ յիրաւի Ասողիկն, ինչպէս որ մենք ուղղագրեցինք, ունի Ռ. Զ. Հ. Է. (Բ, ը, էջ 99. Ս. Պետերբ. 1885)։

3. Մ. Կաղանկայտ. Բ. լէ. էջ 313—319. Փարիզ 860։

տն։ Եւ եղիցի աւրհնութիւն տն ի վերա նոցին»[1]։

Ըստ վէպի փոփոխակների մեծ մասի Մհէրը գնում է Մըսր և իւր որդոց տանում, երբ այնտեղ Մելիքին յաջողել էր Մսրամելիքը, ըստ մի քանիսի նախորդին սպանելով։ Մհէրը Մսրամելիքին յանձնում է իւր որդոց խնամատարութիւնը։ – Ահա թէ ինչ է ասում պատմութիւնը։ Աստուած խռովութիւն քցեց Իսմայէլի որդոց Հնդկաստանի, Ասորեստանի, Եգիպտոսի և Տաճկաստանի չորս բանակների մէջ։ Արդ Եգիպտոսինը և Տաճկաստանինը [=Արաբիա] միաբանելով սպանեցին իրենց թագաւորին [=Օսման] և ուրիշ թագաւոր [=Ալի] դրին։ Իսկ Ասորեստանի իշխան Մաւիասը, որ իրենց թագաւորի երկրորդն էր, սպանեց և այս Եգիպտացոց թագաւորին և ջարդելով Տաճկաստանի բանակը՝ դարձաւ Ասորեստան [=Ասորիք]։ Մաւիասը զօրացաւ, յաղթեց բոլորին ծովում և ցամաքում և թագաւորեց Իսմայէլի որդոց կալուածքների վրայ։[2]

Օսմանի և Ալու կռիւները և Մուաւիայի յաղթանակը 656—661 թուականներին Հայաստանն իրաք Արաբացոց իշխանութեան տակն էր։ Համազասպն[3] այդ միջոցին պէտք

1. Գաբեգին վ. «Դաւիթ Փիլիսոփայ». Արարատ 1906. թ. 1, էջ 91. § Ե։ Գար. Զարբ. Հին դպրութիւն, Դաւիթ Բագրեւանցի, էջ 455. Վենետիկ 1897 և Հայկ. Թարգ. էջ 329. Վենետ. 1889։ Գաբեգին վ. հանել է Ս. Էջմիածնի մատենադարանի № 917 (=Կարին. ց. 903) ձեռագրի 156ա էջից։

2. Սեբէոս Գ, լը, էջ 152—153։

3. Համարեա թէ սոյնպիսի պարագաներում Քաջ-Վարդանի հայը և Ս. Սահակի վեհայ Համազասպ Մամիկոնեանը Տիզբոն է գնում (Խոր. Գ, ծա, էջ 244)։ Բացի այս հեռաւոր նմանութիւնից ուրիշ ոչ մի գիծ առ այժմ չենք գտել վէպում։ Անտարակոյս Մեծ-Մհէրը նախ այս Համազասպն է, ոակայն դժբախտաբար պատմութիւնը, մանաւանդ Բուզանդը և Փարպեցին ու Եղիշէն Խորենացուց էլ աւելի սակաւ բան են հաղորդում իրենց Համազասպների և Համազասպեանների մասին։ Մինչդեռ Համազասպ Վահանեան և սորա եղբօրորդի Համազասպ Գագիկեան իrof ազգել են և հեռբեր թողել ընդհանրապէս վէպի և Մեծ-Մհէրի վրայ (Հմմ. № 13, ԼԱՀ, էջ 5[39] և Ղևոնդ պատմագրի լ, էջ 130—131. լը, էջ 133—135 և Հմմ. լգ, էջ 135—137. և խ, էջ 164—165 ևն)։

է Դամասկոսում եղած լինի և նորա հրամանով Դաւիթ թարգման Տարօնացին ճառ է թարգմանում։ Համաղասպի երեք որդին և եղբայրը Գրիգոր պատանդ էին, որ եղբօր մահուանից յետոյ ամիրապետից Հայաստանի կառավարիչ նշանակուեցաւ։

Ըստ վէպի փոփոխակների մեծ մասի Մհէրը բնականաբար Սասունի Թագաւոր է, ըստ միքանիսի Մհէրը Մսրայ Թագաւոր է, իսկ համարեա ըստ մեծ մասի Մսրայմելիք-Շուն-Մելիքը Մհէրի անհաւատաղատ զաւակն է, իւր՝ Մհէրի մի երկրորդ կամ նախորդ Մսրամելիքի և կամ մի այլ անհաւատ կնոջից և նորա յաջորդն է Մսրում։ Մի փոփոխակում միայն Առիւծաձև Մհէրի հօր՝ Սանասարի եղբայր, ուրեմն Մհէրի հօրեղբայր, Ասլիմելիքն է Մսրայ Թագաւոր, որին սակայն դարձեալ Մհէրի խորթ որդին սպանում է և յաջորդում։ Արդ այս հանգամանքներից միայն այն է Համաղասպին համապատասխանում, որ նա Սասունի տէրը կամ Թագաւորն է։ Դժուար թէ Համաղասպի Դամասկոս գնալը միայն առիթ տար այսպիսի զրոյցի, էլ չեմ խօսում Մուաւիյայի մասին, որի հայ կամ հայ ծագումն ունենալու մասին ծիծաղելի կը լինէր մտածելն անգամ։ Դարերի ընթացքում Բաբելոն-Բաղդատ, Նինուէ-Մուսուլ, Դամասկոս, Սամառա և այլ մայրաքաղաքներ տարագրուած պատանդ և դերի հայ իշխանների կեանքի հանգամանքները կարող էին ի հարկէ այս տեսակ զրոյցների տեղիք տալ, ինչպէս քիչ վերև Շամիրամի և Արայի օրինակով չեշտեցինք։ Սակայն մինչև ցարդ մենք տեսանք, որ ժողովրդական վէպի նման հանգամանքները արդիւնք են ոչ թէ երևակայութեան, այլ անդրադարձումն պատմական խոշոր մանաւանդ այնպիսի իրողութեանց, ուր անունների կամ անցքերի նմանութիւն կայ, վէպի համար փոյթ չէ, թէ այդ անձերն ու անցքերը իրարից դարերով հեռու են։

Մենք արդէն տեսել ենք, որ Դարեհ Վշտասպեանի ժամանակ կային նշանաւոր հայ զօրավարներ Դադարշէսը և Անդիտի որդի Արախը, որ Բաբելոնում իրեն հրատա-

բակեց Նաբուքոդոնոսոր և Բաբելոնի Թագաւոր[1]։—Դարերի ընթացքում վէպը շերտաւորուել է և նման պարագաներով հիւսել է և սաեղծագործել միապաղաղ մի ամբողջութիւն։ Այստեղ ազդել են Արաբացոց և Համաղասպ Մամիկոնեանից դարեր յետոյ տեղի ունեցած պատմական հետևեալ անցքերը։ Մելիք-շահի թուրք սորուկ հաջիբ՝ սենեկապետ Ակսունկարը, որ Տուտուշի փոխարքան էր Հալէպում (1085—1094), ապստամբեց սորա դէմ և սպանուեցաւ։ Սորա որդին աթաբէգ Իմադ-ադ-դին Զանգին 1127 թուականին նշանակուեցաւ Իրաքի և Բաղդատի փոխարքայ և նոյն տարին տիրեց Մուսուլին, Սինջարին, Ջեզիրային և Խառանին, իսկ յաջորդ տարին Հալէպին և Ասորիքի այլ քաղաքներին։ Նա յատկապէս փայլեց իբրև պաշտպան մահմէդականների խաչակիրների դէմ։ Սորա մահից յետոյ իւր երկիրները բաժանեցին երկու որդիքը. Նուրադ-դին Մահմուդը, խաչակիրների միս նշանաւոր հակառակորդը, որ տիրեց Ասորիքին, իսկ Սէյֆ-ադ-դին Ղազին իշխում էր Մուսուլում և տիրում Միջագետքին[2]։ Արդ Սէյֆ-ադ-դինը մեր վէպի Սիւդին է[3]։ Իսկ Նուրէդդինի մօտ գնաց Ռուբինեանց Մլեհը Հայրենի երկրից մերժուելով, նոցանից ստացաւ Կուրիս գաւառի իշխանութիւնը և ոմանց ասելով մահմէդականութիւնն ընդունեց։ Նուրէդդինի հետ, ինչպէս ասում են, եղբայրացել է և երկուսը միասին դրամ են կտրել իրենց անունով[4]։ Մլեհն իրօք եղել է հալածեալ և հալածիչ։ Մլեհի կեանքի դլխաւոր գծերն ու հանգամանքներն երևում են աւելի Պատիկ Մհէրի վրայ (Հայրական ժառանգութիւնից զրկուելը, Հալէպ գնալը և այլն), ինչպէս յետոյ կը տեսնենք։ Մլեհ և Մհէր[5] անուան նմանութիւնը, միևնոյն երկրում կատարուած

1. Արարատ 1906, Յունիս—Յուլիս, էջ 604։
2. Ստէնլի Լէն-Պուլ Мусульманскія Династіи, § 62, էջ 136—138։
3. № 4. ԳՍ. Մկբ. Գ՝ Դաւիթ, էջ 99—100։ Տես Արարատ 1906, Ապրիլ, էջ 337-ի ծանօթութիւն, մեր յօդուածը։
4. Ալիշան. Սիսուան, էջ 56—57. Վենետիկ 1885։
5. Այս օրինակ փոփոխութիւններ յատուկ են ոչ միայն հա-

քաղաքական անցքերինը՝ հայոց և մահմեդականների մէջ Համազասպի և Մլեհի ժամանակ անշուշտ և Մլեհի ու Նուրէդդինի կեանքի առանձին հանգամանքները կարող էին վէպին առիթ տալ Մեծ-Մհէրին Մսրայ թագաւոր ևս դարձնելու։

Սակայն տակաւին անբացատրելի են մնում Մհէրի խորթ որդու Մելիքի կամ Մսրամելիքի և կամ Շուն Մելիքի և Մհէրի հօրեղբօր Ալիմելիքի Մսրում թագաւորելու հանգամանքները։ Դարձեալ դիմենք պատմութեան։ Մահմէդականութեան տիրապետութեան շրջանում եղել են հաւատուրաց հայ իշխաններ, որոնք, ինչպէս յատուկ է այս նորադարձներին, պատուհաս են դարձել իրենց ազգի գլխին, ինչպէս Փիլարտոսը [1], որ Թոռնիկ Մամիկոնեանին սպանել տուաւ. Կութլուղ Սասունցի հայ սարուկը, որ 1198-ին Խլաթում եօթն օր շահի-արմէն դարձաւ [2]։ Սակայն սոցանից ոչ մէկը և ոչ միւսը Մուսուլի կամ Մսրի թագաւոր չեն եղել, այնտեղ չեն իշխել, որքան էլ որ կարող էին առիթ դառնալ վէպի այդ զրոյցին։ Այդ մասի հէնքը կամ հիմքը հետևեալ պատմական իրողութիւնն է։

Արաբացոց խալիֆայութեան տիրած բոլոր երկրները, մահմէդական աշխարհը, յետոյ շատ պետութեանց և հարստութեանց բաժանուեցաւ։ Ժ-ԺԱ դարում երկու գլխաւոր խմբի բաժանուեցան։ Ասիոյ մահմեդական պետութիւնները, սիւննիներ, հնազանդւում էին Բաղդատի խալիֆաներին իբրև կրօնապետի. իսկ Աֆրիկայի տէրութիւն-

---

սարակ ժողովրդին, այլ և տեսնում է պատմագրերի մէջ. Մ. Ուռհայեցին Մարաշ-ը կոչում է Մշար (20)։ Տարօրինակ կրճատում ունի Ղևոնդ պատմագիրը, «Շամ, որ է Հեշմ» (ԺԵ, էջ 100), այն է Հիշամ։ Անշուշտ պատմագիրներն էլ այս ձևերն առնում են ժողովրդից։

1. Մատթէոս Ուռհայեցի էջ 206—210. Վաղարշապատ 1898։

2. St. Martin, Mémoires I, էջ 432,

ները հպատակւում էին Եգիպտոսի [=Մըսր] շիա Ֆատիմեանց, որոնց հնազանդւում էին Արաբիոյ և Ասորիքի մի քանի բանդագուշ ցեղեր։ Ազիզի ժամանակ (957—996) նուաճեցին Հալէպը, Դամասկոսը և Մուսուլը։ Սորա յաջորդ Հաքէմը, հուժկու խալիֆաներից վերջինը, սպանուեցաւ քրոջ ձեռքով և տեղն անցաւ Դահէր կամ Զախիրը (1021—1036)։ Սորա յաջորդ Մուստանսիրի ժամանակ (1036—1094), ինչպէս և յետոյ, խալիֆաներն անուանական էին և լոկ կրօնապետներ, իսկ աշխարհիկ իշխանութիւնը, ինչպէս և Բաղդատում, անցաւ Թուրք Թիկնապահ գնդի զօրավարներին, որոնք սկզբում վեզիր յետոյ Թագաւոր կամ սուլթան անուանուեցան։ Այս վեզիր Թագաւորներից առաջինն եղաւ Աբու Մոհամմէդ Հասանը մականուանեալ Ցազուրի, մի իմաստուն, հուժկու և խստաբարոյ իշխան, որ ատելով քրիստոնեաներին Ս. Յարութեան տաճարը կողոպտել տուաւ։ Սա սպանուեցաւ, իսկ Թիկնապահ գնդի մէջ ծագած խռովութեանց վերջ տուաւ վայրագ վեզիր-Թագաւոր Նասր-էդ-Դաուլան։ Եգիպտոսի ամբողջ կուլտուրան իսպառ սպուռ ընկեց, ծագած ներքին խռովութեանց յաջորդեց սով և ժանտախտ։ Սովի, սրածութեան և այս սարսափների ժամանակ խալիֆան դիմեց վեզիր Թագաւոր Բէդր-ալ-Ջեմալիին [1] որ հայ էր։

---

1. Բէդր-ալ-Ջամալիի մասին տես և Gustav Weil, Geschichte der Chalifen III, Վեզիր Ֆատիմեանց էջ 110, Կաբ. Անսիկի դէմ էջ 125. Դամասկոսի պաշարումը, էջ 128. Mannheim, 1851։ Բեդր անունը, որ նոյն է Թուրքական Բադր կամ Բէդր անուան հետ (Ստէնլի Լէն-Պուլի ցանկը) կարող է հայոց Պետրոս անունը լինել։ Այս անուան ֆրանսերէն ձևը Պիէր կարող էր խաչակրութեան ժամանակ իբրև մօտ Թուրքական Պիր անուան (Ստէնլի Լէն-Պուլի ցանկը) ծանօթ լինել մահմէդականներին։ Ուստի կարծում ենք, թէ մեր ազգային ժողովրդական վէպի Պիրաբադինը կամ Պիրհաջը (№ 3. Գ. Աբբ. Գ՝ Դաւեթ, էջ 33—35), եթէ ոչ Բէդրը գէթ մի ուրիշ հաւատուրաց լինի։ Խլաթայ շահիարմէններից մինը Ակ-Սունկար (Ստ. Լէն-Պուլ § 65, էջ 143) կամ Ակ-Սանկոր Հազարդինարին կոչւում է Բէդր-էդ-դին Խաշդաշ (Խաշդաշ=խաչքար) (St. Martin, Mèmoires, I, էջ 432) պէտք է հայ լինի, որ

«Այս աղբալի դրութիւնից, ասում է Գէորգ Վեբերը[1], Եգիպտոսը [=Մսրը] ազատուեցաւ միայն այն ժամանակ, երբ Նասր-էդ-Դաւլայի սպանումից յետոյ խալիֆան իսլամ դարձած հայ Բէդր-ալ-Ջէմալիին իւր վարձկան գնդերով Ասորիքից կանչեց։ Սա իմաստուն կառավարութեամբ վերականգնեց կարգը և առաջուան բարեկեցութիւնը, բայց Ասորիքն ու Պաղեստինը ստիպուած էր թողնել մի վայրենի և աւազակաբարոյ թուրք գնդի, որ իւր քրիստոնեաների դէմ յարուցած հալածանքներով խաչակիր արշաւանքների գլխաւոր առիթը տուաւ։ Նուտով այս թուրք հորդաներն ընկճուեցան մի սելջուկեան ցեղապետի գերազանց ուժով, որ այժմ Դամասկոսում հաստատուեցաւ և իւր տէրութիւնը . . . տարածեց մինչև Մուսուլ և Հալէպ։ Բայց թէ ընկ և թէ ուխտաւոր քրիստոնեաների վիճակն այս փոփոխմամբ չբարւոքուեցաւ։ Առաջին խաչակրութեան ժամանակ Մալէք-Շահի որդի Բարքիարոխը իւր իշխանութեան տակ ձգեց ամբողջ Ասորիքն ու Միջագետքը և Երուսաղէմում, Անտիոքում և Մուսուլում և այլ տեղերում կարգեց հարկատու իշխաններ։ Սակայն առաջին խաչակիրների երևալուց սակաւ ինչ առաջ Երուսաղէմը ընկել էր Եգիպտոսի վեզիր Ահմէդ Աֆդալի ձեռքը, որ Բեդր-ալ-Ջեմալիի որդին էր»։

Ի նկատի առնելով պարագաները, Արաբական իշխանութիւն, Եգիպտոս-Մսրը, Միջագետք-Մուսուլ, դահի և վեզիրութեան կրկնակի փոփոխումը սպանութեամբ և այն, որ Մէհը-Մլեհի հօրեղբայր Ալիմելիքը [=իսկական, արժանաւոր, ցեղով մելիք] համարուել է Բէդր-ալ-Ջամալին իբրև Մէհը-Մլեհից ժամանակով առաջ ապրած, մինչդեռ Ահմէդ-

---

սա Սոկմանի usուկն էր, աւելի հաւանական է դարձնում մեր ենթադրութիւնը։ Ցամենայն դէպս իրողութիւն է, որ սորա անմիջական եօթն օրեայ յաջորդը 1198 թուականին Կութլուղը նոյնպէս սորուկ և Սասունցի հայ էր։

1. Lehrbuch der Weltgeschichte I, § 372. էջ 684—685. Leipzig 1888:

Աւդալը անհաւատ կնոջից Մսրամելիք կամ Շուն-Մելիքն է, որի միայն հայրն է հայ։ Այս երկուսն էլ հայր և որդի իբրև վեզիր-սուլթաններ Եգիպտոս-Մսրի թագաւորն են, ինչպէս Մէհերը կամ Ալիմելիքն ու Մսրամելիքը։ Հայ ժողովրդի՝ համարեա ամենուրեք, դարերի մանաւանդ մահմեդականութեան շրջանի դառն փորձառութիւնից ծագած համոզմունքն է, թէ հայութեան հալածիչները հաւատուրաց, ծագմամբ հայ մարդիկ են։ Այսօր նոյնը շշուկով խօսւում է և արիւնռուչտ սուլթան Համիդ Բ. մասին։ Արդեօք Բէդր-ալ-Ջամալին և իւր որդի Մահմէդ Աւդալը այս տիպերից են, առայժմ չենք կարող պատմութեամբ հաւաստել։ Վէպին հայելով Բէդրն իբրև Ալիմելիք կամ Մէհեր զերծ պիտի լինի այդ առաքինութիւնից, բայց ոչ որդին, որ բռնում է վէպի Շուն-Մելիքի տեղը։ Սակայն մի բան էլ ասենք, ինչպէս առհասարակ Բիւզանդիոյ հայ՝ մանաւանդ մակեդոնական կոչուած հայ հարստութեան կայսրները և մեր օրերում օտարներին ծառայող նշանաւոր հայերը, ևս առաւել Եգիպտոս-Մսրի այդ երկու վեզիր-թագաւորները իրօք կարող են «օտարի ծրագ» համարուել։ Այսպէս է ասում հայ ժողովուրդը այսօր էլ և նոցա այս աշխարհայեացքը կրկնում է իւր դիւցազն Մհերի բերանով մեր ազգային ժողովրդական վէպը։

Մի քանի խօսք ևս Մհերի ծագման և մակդրի մասին։—Սասմայ ծռերի մէջ Դիւցազնական տարրը երևում է Մհերների վրայ։ Մհեր՝ Մհերիկի վախճանը և Մհեր՝ Մեծ Մհերի ծագումն այդ են ցոյց տալիս։ Մհերը Միհր-արեգակն է։ Մեծ Մհերը ծնւում է ջրից, ծովից, որ հեռևանք է այն գաղափարի, թէ ծովը Միհր-արեգակի մայրն է։ Մենք ասում ենք «արևը մայը մտաւ» և հասկանում երկիրը, բայց շատ տեղ էլ ծովը, մի գաղափար որ հեթանոս հայերն էլ ունէին արեգաչեայ Վահագնի մասին. ոչ ապաքէն երգում էին, թէ նորան «երկնէր և ծիրանի ծով»։ Մեծ-Մհերի ձին ևս Բուռեկ ջալաթը հրեղէն է, բայց կոչ-

ւում է և ջրեղէն և քամեղէն[1]։ Հերոդոտի պատմուածքը՝— Դարեհ Վշտասպեանի ձիու խրխնջոցով ընտրութեան հանդամանքը և հայոց Եփրատին ձիեր նուիրելը—այժմ պէտք է հասկանալի դառնայ։ Մհէրի թուր կէծակին զրադաշտական ծագումն ունի. այդ կրօնի համար «ամենասուրբն էր ամպերի կրակը—կայծակը»[2], որ ուրիշ տանուտէրնդ զանազան կրակների հետ միացած սպանում է բոլոր դևե-

1. Դիւցաբանական տարրն արտայայտւում է ընութեան և իւր երևոյթների անձնաւորութեամբ և աստուածացումով։ Ջրի պաշտամունքի հետքերն արտայայտում են մեզնում, լուս աղբիւրներ, կաթնաղբիւրներ են։ Վարդավառի ու Համբարձման տօները, որ և ծաղկի տօն է. որոշ ծաղիկներ նուիրական էին Միհրին, ինչպէս և օրեր (Iran. Philol. II, էջ 642)։ Մեզնում ինչպէս վէպից և Խորենացուց երևում է ուրբաթ օրը։ Աղբիւր եղբօր պաշտամունքին վառում էին «կրակ-քոյրը» (Խոր. էջ 301), որ ցարդ կատարում ենք Տրընդէզին՝ Տեառնընդառաջին։ Իսկ քամին Ն. Նախիջևանի ժողովուրդը համարում է մի մարդ, որ սարի վրայ նստած փչում է. «Զի էլ կշտանայ փչելուց» ասում են և անիծում. «Ծակդ բռնուի»=բերանդ փակուի։ Ս. Ծռերում ևս գործում են քամիները. Ճարպախաչ (№ 4 ԳՍ. Մկբ. Դ՝ էջ 100։ № 11, Ա, Մկբ, էջ 5) կամ Զարբախայ (№ 8, ՀԷԲ, Մկճ, էջ 20, 23), Յարատայ (№ 7, ԲԽ, մկբ, էջ 18) և Բաթմանայ Բիւղէն մշտ նոցանից անբաժան։ Ճարպախաչ=չորս ջուր, գետ, ծով. կայ մի կերճ, կապան Սասունից վերև՝ հիւսիս այդ անունով (Վէրք Տարօնոյ, էջ 10—11։ Մելքախարեան Կ. Ա. մասն Թ, էջ 30—31 և Խարիսխ օրաթերթ, № 35), որ ցրտաշունչ հողմ և ջուք ու ջորան է փչում։ Յարատայ քամին հաւանօրէն Լիբիական անապատից, Եգիպտոսից և Արաբիայից փչող կեղեչ Հարմադանն է, որ անցնելով Միջագետք, Պարսկաստան, Միջին Ասիա հասնում է Չինաստան։—Իսկ Բաթմանայ Բիւղէն, Բուղայ զօրավարն է։ Որպէսի ոքանչելի համեմատութիւն և նոյնացում ընութեան այդ ահարկու երևոյթների և տարբերային Բուղայի, որ Հայաստանը տակն ու վրայ արաւ։ Մի ուրիշ հրեշ ևս կայ մեր վէպում Կասրմ=Կաշմ ոստիկանը. Նա Նախաբարներին այրեց Հ. Նախիջևանում, այստեղ դարձել է սուրհանդակ՝ Կասրդ Կասոն (№ 4 ԳՍ. մկբ, Դ՝ Դաւիթ, էջ 103)։

2. Ратцель Народовѣдѣніе, перев. Л. А. Коропчевскаго, էջ 768. С.-П. 1903։

բին։ Այս բոլորից յետոյ պարզ է, ինչպէս Միհրի պաշտամունքը, այնպէս էլ անունը հայերս ստացել ենք Իրանից։ Հաւանօրէն այս հանդամանքին պիտի վերագրել այն երևոյթը, որ Զոլանց Տան հայ ժողովրդական վէպը կարծես թէ այդ զգալով իւր դիւցազներին և յատկապէս Մհէրին կապում է Իրանի դիւցազների հետ ազգակցական կապերով[1]։

Սկզբում վէպը, ինչպէս երեք փոփոխակներից ևս երևում է, ունեցել է միայն մի Մհէր, ինչպէս կայ միայն մի Միհր-արեգակ, բայց յետոյ երկճեղքուել է։ «Խազար Մհեր կայ, խազար Դաւիթ կայ. մա մենակ ղիւ ես Մհեր»[2] ասում է Օզան-Ցոզան թագաւորը։ Բայց և այնպէս վէպի փոփոխակների մեծ մասն ունին երկու Մհէր, Մհէր-Մեծ-Առիւծաձև Մհէր և Մհէր-Մհերիկ-Պստիկ Մհէր, որ է իսկապէս Միհր-արեգակը։ Այս երկճեղքումը տեղի է ունեցել, երբ Մամիկոնեանք և Արծրունիք սկսել են Միհր-Մհէր անունը գործածել, երբ դեռ վառ էր մնում նախնիքների յիշատակը և «ըստ յուսոյ» կոչում էին, բայց ժանաւանդ երբ մնացել էր դեռ ևս անմոռաց փառաւոր արքայական չինական և ասորական ծագումն։ Հնագոյն ժամանակներում իշխանները և արքաները դիւցազներ կամ աստուած են համարուել, ինչպէս և մեր Տիգրան Մեծը. Կագմոսը Հայկին անուանում է «Մեծդիւցազանց», իսկ Տրդատ Մեծը իւր նախնիք Պարթևներին «Դիւցախառն»[3] կոչում։ Չինաստանի Բոդդիխանը այսօր էլ երկնքի որդի է համարում, իսկ ճաբոնացոց Միկադոն աստուած։ Ասորեստանն ունէր Բէլ արեգակ աստուածը, բայց ունեցել է և համանուն թագաւոր, որ երկիրն ազատել է Արաբացիներ-

1. Բ. Խալաթեանց. Իրանի Հերոսները Հայ ժողովրդի Մէջ Պարիս 1901։ Հմմ. Էմին-Ազգ.-ժողովածու, հատոր Ե. Հայ-Քրիստոնեական վէպ։ Ս. Հայկունի. Մոսկուա-Վաղարշապատ 1904։

3. № 9, ՀԷԴ, Շտբ. էջ 394։

1. Ագաթանգ. ԺԲ, § 127, էջ 73, տպագ. Ս. Էջմիածնի 1908, Տփխիս

ըից [1]։ Ասորեստանի արքայական կաղմն ու շուքը անցաւ Իրան։ Պարսից արքայից արքաները սեպագրութեանց մէջ անգամ, մանաւանդ Սասանեանք, իրենց կոչում են աստուած [2] կամ աստուածորդի և բարձակից արեգական [3]։ Այդ աստուածը իհարկէ Միհրն էր, Միհր–արեգակը։

Մեր Մամիկոնեանք էլ պարծենում էին իրենց չինական արքայական ծագմամբ, ինչպէս Արծրունիք ասորական արքայական ծագմամբ։ Մհէրը մեր վէպի մէջ իզուր չէ կոչւում «Սասման խոյուց, Սասման տան խոյու դառ». արծիւը երկնային ծագման նշան է, ինչպէս և խոյը արքայական վեհափառութեան և Verethragna–Վահագնի նշանը [4], ինչպէս վկայում է Շպիգելը։ Մեր Սասայ խոյերից մէկն է Առիւծաձեւ Մհէրը, որ ձեւում, ճղում է Սասունին սով սպառնացող առիւծը։ Պարսից արքաների պետական զինանշանը ցայսօր շիրի–խուրշիդ առիւծ–արևն է. մի գաղափար, որ հայ ժողովրդին ևս անծանօթ չէ [5]։ Ինչպէս արքայից արքաներն այնպէս էլ մեր Առիւծաձև Մհէրը երկնային Միհրի երկրային զուգատիպ ձեւն են, ինչպէս նոքա առիւծներ են որոում, այնպէս էլ մեր Մհէրը։ Բայց Մհէրի առիւծ սպանելը արդեօք հեռաւոր յուշիկ չէ՞ և այս պատմական անցքի։ Մանուէլ Մամիկոնեանը, իս-

1. Մ. Աբեղեան Հայ ժողովրդական Առասպելները Ե, էջ 257։

2. Fr. Spiegel Eranishe Atlterthumskunde III, էջ 599—602. Leipzig 1878։

3. Մ. Խորենացի Գ, ծէ, էջ 249—250։ Գ, ծէ, էջ 202։

4. Շատ դիպուն է Քաջ Վարդանի սաղաւարտը խոյագլուխ նշանով։ Արդեօք այդ որ և է ձեռագրի գրաւոր կամ բանաւոր աւանդութեան վրա՞ է հիմնուած։ Մեր մանկավարժների նեստոր՝ Սեդրաք Մանդինեանի ասելով՝ Քաջ-Վարդանի պատկերը հանգուցեալ Կ. Եղեանի աւիւնի (фантазія) արդասիքն է։ Ցանկալի էր այդ մասին աւելի և հանգամանօրէն հաղորդել ելուր հասարակութեան և բանասէրների։

5. Հայ ժողովուրդը տեղ տեղ համարել է արեգակը եղբայր, լուսինը քոյր, իսկ շատ տեղ էլ հակառակը։ Արևը վախենում է երբև աղջիկ գիշերները դուրս գալ, ցերեկն էլ ամաչում է, ուստի եղբայր լուսինը գիշերն է դուրս գալիս, քոյր արեգակը

կապէս սորա նիզակակից Բաբիկ Սիւնին, սպանեց արևառիծ Մեհրուժանին, որ այնքան ջնասեց հայերին և չարչարել տուաւ մանաւանդ Մամիկոնեան տիկիններ, ինչպէս վկայում է Փ. Բուզանդը [1], և ոչ թէ Սմբատ Բագրատունին, ինչպէս պատմում է Մ. Խորենացին [2]։ Բուզանդի թէ Մամիկոնեանց և թէ Մեհրուժանի գործողութեանց և պատերազմների նկարագիրը համարեա ամբողջապէս պատմական վէպ է։ Վէպը կարող էր Բաբիկ Սիւնու քաջագործութիւնը վերագրել Բուզանդի Համազասպ, Համազասպէ, Համազասպեան Մամիկոնեան սեպուհին, որ մանկից էր այդ պատերազմներին, մանաւանդ որ վերև էլ տեսանք մի նմանութիւն Մեծ-Մհէրի և Քաջ-Վարդանի հօր Համազասպի գործողութեան։ Անտարակոյս Բիւզանդի սեպուհ Համազասպը Վարդանի հայրն է։ Եթէ Մ. Խորենացին նոյն գործը կարող էր ուրիշին վերագրել, ապա պէտք է խոստովանել, որ վէպն աւելի հիմք ունէր։

Մհէրը մեռնում է երդմնազանցութեան պատճառով։ Այս գիծն ընդհանուր է թէ սեմական և թէ հնդկագերմանական ցեղերին։ Եբբայեցոց Սամփսոնն էլ առիւծ է սպանում, ինչպէս և հելլէնների Հերակլէսը։ Մեր Մհէրը քառասուն անծին մատաղ արած երնջի արիւնով երեսը լուանում է։ Այս քրիստոնէացած ձևն է դիւցազնականի, որով լողանում է գերմանացի Զիգֆրիդը իւր սպանած վիշապի արեան մէջ և անխոցելի դառնում, ինչպէս և Աքիլլէսը Ստիւքսի ջրերում։ Եւ յիրաւի մեր միւս դիւցազն Դաւիթը ճիշտ միևնոյն հանգամանքում «մորթում է երինջները և

ցերեկը։ Եղբայրը քրոջ տուաւ մի բուռ առեղ որ իրեն նայողների աչքերը ծակէ։ (Աղբիւր. 1887. № 5—6)։ Այդ ժամանակից արևը մի առիւծ է նստում, որ մի մեծ սուր ձեռքին չար ոգիներից նորան պաշտպանում է (Ազգ. Հանդէս 1. էջ 348. II, էջ 217. M. Abeghian Armenische Volksglaube, էջ 46. Leipzig, 1889։)

1. Փ. Բուզ. Ե, լգ, էջ 258—263. Հմմ. Ե, լէ, էջ 249—251։

2. Մ. Խոր. Գ, լէ, էջ 227։ Այս վիպական գիծը համեմատիր Յովհ. Մամիկ. Պատմ. Տարօնոյ Դ, էջ 47. և Թ. Արծր. Ա, ժա, էջ 67, 69։

լողանում արեան մէջ»[1]։ *Եւ եթէ ոչ Մհէրը, բայց Դաւիթն ունի մսէ խաչ*[2]. *այդ նոյն է, ինչ որ Աքիլլէսի գարշապարի և Զիգֆրիդի թիկունքի խոցելի մնացած մասերը։*

Մեր Մեծ–Առիւծաձև Մհէրն էլ ծնւում է հողնդէնից, բայց անսերմ յղութեամբ, ջրից՝ ծովից, կէս հրեղէն, կէս հողնդէն, մի աստուածամարդ. ուստի նա անմահ անմեռ չէ, այլ մեռնում է իբրև երդմնազանց, ինչպէս և Սամփսոնը և յետոյ մեր Դաւիթը։ Սակայն ինչպէս որ կայ դիւցազն Վահագն Վիշապաքաղ հեթանոս Հայոց քաջութեան անմահ աստուած արեգաչեայ Վահագնը, այսպէս էլ կայ մահկանացու դիւցազն Առիւծաձև Մհէր և անմահ, անմեռ Մհէր, Մհէրիկ, Պստիկ–Մհէր[3]։

---

1. № 1, ՍՊ. գ, էջ 13։

2. *Պարսկաստանի առասպելական Կայանեանք սկսեալ Կայկոբադից ունին մի խալ իբրև նշան* (Spiegel Eranische Altertumskunde I, էջ 616), *Սելևկեանք լուր էին տարածում, թէ իրենց ազգրների վրայ ունին խարսխի նշան* (Spiegel. III, 599)։ *Այս ուրեմն մի արքայական ծագման նշան է. մեր վէպում սակայն քրիստոնէական ձև է ստացել։ Խաչի դերութիւնից և աղատումից յետոյ խաչի պաշտամունքը զօրացաւ մեղնում ևս. Սահակ Հորափորեցին երգում է իւր խաչի շարականները, յօրինւում են բազմաթիւ խաչերի պատմութիւններ, երևան են գալիս «Ս. Նշաններ», որ կրում է Դաւիթը։ Հռոմոց կայսրը և կամ մեր Սմբատ Բագրատունի թոռ Սմբատը ծոցում խաչ է կրում* (Սեբէոս, Գ. էդ, էջ 136)։ *Մհէրը կրում է հմայիլ, այս արդէն հեթանոսական է, թերևս քրիստոնէականի խառնուրդով։*

3. *Մհէրի նմանութիւնը Արտաւազդի հետ քանիցս շեշտել ենք, դիտել է և պ. Աբեղեանը, որի տեսլով Արտաւազդի նմանութիւնը Ամիրանի հետ, նախ նկատել է Մ. Էմինը* (*Հայ ժողովրդ. Առասպելներ, Է. էջ* 364—365. *Վաղարշապատ* 1901)։ *Սակայն պէտք է դիտենք, որ այդ աւելի արտաքին է։ Ամիրանը մեր Մհէրն է։ Գոնեա Մհէրի ընտանութեան չար կողմը Սասմայ ծռերի մէջ անցել է դև Արտաւազդի և Ռուբինեան չար Մլեհի գծերից, դէպքերի և անուանց նմանութեամբ։ Թողնելով վրաց Ամիրանի ժողովրդական վէպի, մեր «Քաջանց տան» այսինքն Աբուսակուեցաց վէպի, մանաւանդ թէ Սասմայ ծռերի այլ նմանութիւնները, շեշտենք ամենաէականը։ Ամիրանը շղթայակապ փակուած է Սակորնիայում և*

տառում է, թէ ինքն է «Другъ бѣдныхъ и угнетенныхъ» *և այլն* (А. С. Хахановъ Ист. Грузин. Словесности I, էջ 40)։ *Յիշեցէք հիմա մեր Մհէրին Աղուաւաց քարում, Սակորնիա վրացերէն նշանակում է ագուաւանոց* (*տար։*)*Յիշեցէք վէպ իւր փոփոխուած անուններով մեր և աղաւաղուած ձևերը, Տոտպան բլուր* (№ 1, ՍՊ, Թ, էջ 26), *Վանայ քար* (№ 2, ՄԱ, *Մհէր*, գ, էջ 58), *Աղուաւու քեար* (№ 4, ԳՍ, դ՝ *Մհէր*, էջ 150), *Ակռափու քար* (№ 11, ԱԱ. *Դաւիթ և Պստիկ Մհէր*, ե, էջ 45), *Ակրփու քեար* (№ 9, ՀԷԴ, *Դաւիթ և Մհէր*, էջ 398), *Աղրփու քեար* (№ 8, ՀԷԲ, *Դաւիթ և Մհէր*, էջ 49) *և Կեռպած քար ... Ղաթայ վերև* (№ 13, ԼԱՀ, էջ 47 [81]) *այլև Մհէրի վախճանը։—Միհրականութիւնը մի ժամանակ մրցում էր քրիստոնէութեան հետ և տարածուել էր ոչ միայն Վրաստանում և Հայաստանում, այլև մինչև Հռոմ* (*տես* Die Mysterien des Mithra, Franz Cumont. *գերմ. թարգմ.* Georg Gehrich) *և մինչև կայսրութեան հիւսիսային և արևմտեան հեռաւոր ծայրը, Անգլիան ովկիանոսը։ Ֆրանսացոց ժողովրդական աւանդութեամբ հարաւային Ֆրանսիայում* Substantio *ժայռի հետ կապուած է Միհրի աւանդութիւնը* (Verhandlungen des II Internationalen Kongresses für Allgem. Religionsgeschichte in Basel, էջ 289—290. 1904. Basel, 1905. A. Westpal-*ի յօդուածի ամփոփումը*)։ *Ժայռերը քարայրներով նուիրական էին Միհրին* (Fr. Lübkers Reallex. des klass. Altertums. *այլև* Albercht Dietrichi-*ի* Eine Mithras liturgie) *ինչպէս և որոշ ծաղիկներ ևն։ Միհրը լինելով լուսոյ, ճշմարտութեան և արդարութեան աստուած* (Iran. Philol. II, էջ 642), *ինչպէս մեր Մհէրը, ծաղիկների և ջրի տօնին Համբարձման և Վարդավառին դուրս է գալիս տարին մի անգամ կամ հինգ նաւակատիքին և արդարութեան արեգակ Քրիստոսի պէս պիտի աշխարհի վերջին, վերջին դատաստանին գայ։ Յիշելով այս բոլորը այլև դիտելով մեր և վրաց ժողովրդի արեգակի, լուսնի և այլ աւանդութեանց նոյնութիւնները, որ գտնում ենք Խախանովի վերոյիշեալ գրուածքում և* M. Abeghian-*ի* das Armenische Volksglaube *գրքում, Ազգագրական հանդիսում և ուրիշ գրքերում. այլ և աչքի առաջ ունենալով վրաց դիւցազնի՝ Ամիրանի խօսքը, չենք կարող համաձայնել Խախանովին, թէ Ամիրանը՝ Ահրիմանն է* (*էջ* 42)։—*Ո՛չ Ամիրանն էլ Միհրն է, ինչպէս և Մհէրը, որ մեր վէպը միացրել է Արտաւազդի և Մլէհի հետ. և Ամիրան անունը Միհր–ան և ամիրա բառերից է կազմուած, ինչպէս որ ցոյց է տալիս և* «амиранствовать» *բայը* (*էջ* 25)։ *Վասպուրականը միհրականութեան կենտրոն է երևում։ Միայն այստեղ են երևում Միհր-ով բարդուած անուններ՝ Մե[հ]ր-ուժան, Մեհ–են–դակ, Մեհ–առ* (*տ. Բիւզանդ և Խորենացի*)։ *Կանդուար—Աղուաւաբար, Պաղատը, Արամազդայ*

դիւաց տունը, կրակ քոյրը և աղբիւր եղբայրը Բութ տեղում, որ յիշեցնում է մեզ Բութկայ աքաղաղը, երբեմն արշալոյսն աւետող, և Ս. Տիկինը Հոգեաց Տիրամօր վանքը և Դարբնաց քարը (Խոր. մատենագր. 301, 295) Միհրին նուիրական վայրեր են եղել. իսկ մեր Միհր-Մհէրն այն կողմերն է փակուած: Ոմանց ասելով Վանայ միւս անունը Շամիրամակերտ=շահ-միհր-կերտ (Ստեփան Պալասանեան, Պատմ. Հայոց, 11, էջ 52. Թիֆլիզ 1890): — Իսկ խաւարի և չարութեան ներկայացուցիչները մեր վէպում զանազան դեւեր են, Գլնկի, Կաղ ևն. (=փոշեհան Ս. Կարապետի, փոփոխուած անուններով և որ բռնել է ուրեմն Մհէրի տեղը): Ահրիմանի անունը հազիւ հազ լսւում է «Հարամի (խարամանի) դև», Խարաման (№ 1, ՍՊ. Դ, էջ 11. ե, էջ 15), որ Եղիշէի «դիւաց Հարամանն» է յիշեցնում (Եղիշէ Բ. 33, 35 և 66. Թէոդոսիա 1861) և Եղնիկի «Արհմանն չար կարծիցի նոցա, վասն դխարամանի անունն յանձի կրելոյ» (Եղնիկ էջ 144 և 235. Վենետիկ. ՌՄՀԵ), այլ և Ակն Անանի-ն, որ «տ՝աւիրի քեռաքն Զրվանն» (№ 4, ԳՍ. Դ, Մհեր, էջ 146), որ անտարակոյս Angra Mainyu-ն է. յայտնի է և Aka Mainyu անունը, որ Ահրիմանն է համարւում (Iran. Philol. էջ 650):

24 յունիսի 1907 ամի.
Վաղարշապատ.

ԹԵՏԱԿԱՆ-ՀԱՅ ԳՐԱԴԱՐԱՆ

«Ազգային գրադարան»
NL0237634

56.777